# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Լ. ՏԱՐԻ ԹԻՒ 37 (1487) ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 16, 2010
VOLUME 30, NO. 37 (1487) SATURDAY, OCTOBER 16, 2010

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ԴԵՍՊԱՆ ԵՈՎԱՆՈՎԻՉԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ ՍԴՀԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԲԱՐՁՐԱՑՈՒՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ



Ամերիկահայ կազմակերպութիւններու հետ իր ունեցած խորհրդակցութիւններու շրջագիծէն ներս, Հայաստանի մօտ Միացեալ Նահանգներու դեսպան՝ Մարի Եովանովիչ Հոկտեմբեր 12-ին Կլէնտէլի մէջ հանդիպում ունեցաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինի պատուիրակութեան հետ:

Հանդիպման ընթացքին կարծիքներու փոխանակութիւն տեղի ունեցաւ Հայաստանի մէջ ժողովրդավարութեան վերահաստատման, Արցախի հարցի լուծման եւ Հայ-Թուրք յարաբերութիւններուն առնչուող հարցերու շուրջ:

Հնչակեան ներկայացուցիչները յայտնեցին որ, որպէս Ամերիկահայեր Միացեալ Նահանգներու կառավարութենէն կ'ակնկալեն աւելի խստապահանջ կեցուածք՝ Հայաստանի մէջ ժողովրդավարութեան ու մարդկային իրաւունքներու խախտումներուն նկատմամբ, առաջին հերթին պահանջելով քաղաքական բանտարկեալներու անյապաղ ազատ արձակումը:

Պատուիրակութեան անդամները կարեւորեցին Հայաստանի մէջ ազատ, արդար ու թափանցիկ ընտրութիւններու կայացումը, զորս անկարելի համարեցին առանց ազատ հեռուստամիջոցներու գոյութեան: Հետեւաբար, մինչեւ յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւնները «Ա1+» անկախ հեռատեսիլի ընկերութեան եթեր վերադարձը խիստ անհրաժեշտ է:

Հնչակեան ներկայացուցիչները նաեւ տարակուսանք յայտնեցին այն մասին, որ Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղար Հիլըրի Քլինթըն, անցեալ Յունիսին Երեւան կատարած իր այցելութեան ընթացքին հանդիպում չունեցաւ ընդդիմադիր ներկայացուցիչներու հետ, թիւր տպաւորութիւն ստեղծելով ե'ւ իշխանութիւններու եւ ընդդիմադիր հասարակութեան մօտ:

Այս հարցերու շուրջ դեսպան Եովանովիչ տուաւ սպառիչ պատասխաններ, յատկապէս յայտնելով, որ Միացեալ Նահանգները Հայաստանի մէջ ժողովրդավարութեան հաստատման հարցով հետեւողական են եւ շատ աւելին կ'ընեն, քան ծանօթ է հանրութեան:

Արցախի հարցի լուծման նպատակով ներկայացուող առաջարկներու կապակցութեամբ՝ պատուիրակութիւնը դեսպանին դիտել տուաւ, որ նախապատուութիւնը պէտք է տրուի Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի ազատ ինքնորոշման իրաւունքին: Այս առումով, Արցախի ներկայացուցիչներու վերադարձը բանակցութիւններու սեղան անհրաժեշտ համարեց:

Հայ-Թուրք յարաբերութիւններու ներկայ հանգրուանի վերաբերեալ պատուիրակութեան անդամները մատնանշեցին Թրքական իշխանութիւններու անազնիւ եւ անլուրջ մօտեցումը յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին մէջ, որ աւելի խորացուց անվստահութեան մթնոլորտը: Անոնք գտան որ, երկու ժողովուրդներուն միջեւ առկայ խնդիրներու լուծման ամենաարդիւնաւէտ միջոցը՝ Թուրքիոյ կողմէ Հայկական Ցեղասպանութեան ճանաչումն է: Իր կարգին, դեսպան Մարի Եովանովիչ յայտնեց, որ Միացեալ Նահանգները կը քաջալերեն Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ երկխօսութեան շարունակումը առանց նախապայմաններու:

Դեսպան Եովանովիչ նաեւ հետաքրքրուեցաւ Հնչակեան Կուսակցութեան ընդհանուր գործունէութեամբ եւ բարձր գնահատեց կուսակցութեան վերջին տասնամեակի հետեւողական կեցուածքը Հայաստանի մէջ ժողովրդավարական արժէքներու հաստատման գործին մէջ:

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԿԸ ՊԱՀԱՆՋԷ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

*Երկուշաբթի, Հոկտեմբեր 11-ին Սլովինիայի Նախագահ Տանիլօ Թյիւրկի Հայաստանի այցելութեան առթիւ կայացած համատեղ մամլոյ ասուլիսի ժամանակ Սերժ Սարգսեան յայտարարած է որ, որքան շուտ Ղարաբաղը լիարժէքօրէն միանայ բանակցութիւններուն, այնքան հեշտութեամբ կարելի կը դառնայ հարցի լուծումը:*

*Շեշտելով, որ հայկական կողմի դիրքորոշումը ղարաբաղեան հարցի լուծման շուրջ կը մնայ անփոփոխ՝ Հայաստանի գործող նախագահը յայտարարեց. - «Խնդիրը պէտք է լուծել բացառապէս խաղաղ ճանապարհով՝ առանց ուժի կիրառման կամ ուժի կիրառման սպառնալիքի, այսօր գոյութիւն ունեցող ձեւաչափով եւ միջազգային իրաւունքի նորմերի խստիւ պահպանմամբ»:*

*Սլովինիայի Նախագահ Տանիլօ Թյիւրկ, իր կարգին, անդրադառնալով Ղարաբաղի հարցին, ըսած է, թէ խնդրի շուրջ Նախագահ Սերժ Սարգսեանի ներկայացուցած վերլուծութիւններէ հանգած է այն եզրակացութեան, որ շատ կարեւոր է առաջ շարժել հիմնախնդրի խաղաղ կարգաւորման ճանապարհով:*

*«Վստահութեան ամրապնդումը անհրաժեշտ կամուրջ է հարցի լուծման համար», - ըսած է Նախագահ Թյիւրկ:*

**Շար.ը էջ 4**

## ԷԴՈՒԱՐԴ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ. «ԹՈՒՐՔԻԱՆ ԵՏ ԿԱՆԳՆԵՑԱՒ ԻՐ ԽՈՍՏՈՒՄԷՆ»

*Ամերիկեան «Ուոլ Սթրիթ Ճուրնըլ Թերթին մէջ հրապարակուած յօդուածի մը մէջ Հայաստանի Արտաքին Գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան յայտնած է որ, Թուրքիա պէտք է ապացուցէ իր բարի մտադրութիւնները», - «Անցեալ տարի, ինտենսիւ բանակցութիւններից յետոյ Հայաստանը եւ Թուրքիան համաձայնութեան եկան, եւ Հոկտեմբերի 10-ին Ցիւրիխում երկու երկրների արտաքին գործերի նախարարները ստորագրեցին դիւանագիտական յարաբերութիւնների հաստատման, սահմանի բացման եւ երկկողմ յարաբերութիւնների զարգացման վերաբերեալ արձանագրութիւնները», - յօդուածին մէջ կը յիշեցնէ Էդուարդ Նալբանդեան:*

*«Հայ - Թուրքական յարաբերութիւնները փակուղում էին, երբ Նախագահ Սերժ Սարգսեանը նախաձեռնեց Թուրքիայի հետ յարաբերութիւնների կարգաւորման գործընթացը: Հայաստանում մենք առաջնորդւում էինք այնպիսի ապագայի տեսլականով, երբ սերունդները կ'ապրեն համերաշխ եւ ապահով: Հայկական կողմի այս նախաձեռնութիւնը դրական արձագանք գտաւ Թուրքիայի Նախագահի կողմից, եւ դա մեզ թոյլ տուեց լուրջ ներդրում կատարել*

**Շար.ը էջ 4**

## ՀԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿԸ ԶՕՐԱԿՑԻ ՊԱՐՊԱՐԱ ՊՈՔՍԸՐԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹԵԱՆ

*ՍԴՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ) պաշտօնական յայտարարութեամբ մը եկաւ իր զօրակցութիւնը յայտնելու Միացեալ Նահանգներու Ծերակոյտի անդամ Դեմոկրատ Պարպարա Պոքսըրի վերընտրութեան: Տիկին Պոքսըրի մրցակիցն է հանրապետական Քարլի Ֆիորինա, որ կը վայելէ մեծ գործարարներու աջակցութիւնը:*

*ՀԱԽ-ի կը յայտարարէ որ, այս զօրակցութիւնը հիմնուած է այն իրողութեան վրայ, որ Պարպարա Պաքսըր իր պաշտօնավարութեան երկար տարիներու ընթացքին միշտ կեցած է Քալիֆորնիոյ Հայ համայնքի կողքին: Ան նաեւ Ծերակոյտէն ներս եղած է պաշտպան՝ աշխատաւոր եւ միջին դասակարգի իրաւունքներուն:*

*«Որպէս Հայ ժողովուրդի իսկական բարեկամ, Պարպարա Պոքսըր միշտ զօրավիգ եղած է Հայկական Ցեղասպանութեան ճանաչման բանաձեւերուն, այցելած է Հայաստան եւ դէմ արտայայտուած է*



*Թուրքիոյ կողմէ Հայաստանի շրջափակման: Ան 2007-ին Ծերակոյտէն ներս բանաձեւ հովանաւորած է Պոլսահայ լրագրող Հրանդ Տինքի սպանութեան կապակցութեամբ»-. ըսուած է ՀԱԽ-ի զօրակցական յայտարարութեան մէջ:*

# ՕՐՈՒԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՆ ՀԵՏ
## ՀԱՅ - ԹՐՔԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ՏԱՐԻ ՄԸ ԵՏՔ

**Գ. ԽՈՏԱՆԵԱՆ**

*Ճիշդ տարի մը առաջ՝ 2009-ի Հոկտեմբեր 10-ին Ցիւրիխի մէջ ստորագրուեցան հայ-թրքական երկու Արձանագրութիւնները, նպատակ ունենալով բարելաւել երկու դրացի երկիրներուն միջեւ դիւանագիտական յարաբերութիւնները ու բանալու համար երկար տարիներէ ի վեր փակ եղող սահմանը: Զուիցերիոյ կառավարութեան միջնորդութեամբ տեղի ունեցած երկարատեւ ու գաղտնի բանակցութիւններու արդիւնքը եղող փաստաթուղթերու հրապարակ գալէն անմիջապէս ետք, Հայաստանի ու սփիւռքի տարածքին յառաջացաւ հսկայ փոթորիկ: Բողոքի ցոյցեր տեղի ունեցան ոչ միայն Երեւանի մէջ, այլ նաեւ սփիւռքի ամբողջ տարածքին: Հայաստանի գործող Նախագահը շրջագայութեան ելաւ սփիւռքի հայաշատ կեդրոնները՝ Փարիզ, Լոս Անճելըս, Պէյրութ եւ այլուր, բացատրելու եւ համոզելու համար, որ Արձանագրութիւնները կը բխին Հայաստանի շահերէն: Սակայն, հայ ժողովուրդը աւելի իրատես գտնուելով ու մանաւանդ վերյիշելով Թուրքիոյ հետ իր ունեցած ու դարերու վրայ երկարող անցեալի փորձը, մնաց անդրդուելի՝ իր սկզբունքային մերժումին վրայ, Արձանագրութիւններուն մէջ տեսնելով ոչ միայն Հայաստանի ապահովութեան սպառնացող դրոյթներ, այլ նաեւ, ոտնահարում՝ Հայ ժողովուրդի պատմական իրաւունքներուն:*

*Ահաւասիկ տարի մը ետք, Արձանագրութիւնները կը մնան չվաւերացուած ու սառած վիճակի մէջ: Թուրքիա առաջին վայրկեանէն իսկ, Հայաստանի առջեւ դրաւ այնպիսի նախապայմաններ, որոք չէին կրնար ընդունելի ըլլալ Սերժ Սարգսեանի կառավարութեան համար, մեկնելով այն իրողութենէն, որ նախապայմաններու ընդունումը ու այդ ուղղութեամբ կատարուած նուազագոյն զիջում, համազօր պիտի ըլլար քաղաքական ինքնասպանութեան:*

*Առանց իր ժողովուրդի թիկունքը վայելելու ճամբայ ելած Հայաստանի իշխանութիւնները, անցնող մէկ տարուայ ընթացքին ձախողեցան իրենց առաքելութեան մէջ եւ հաւանաբար նոյնը շարունակուի տեսանելի ապագային:*

*Այս օրերուն, Արձանագրութիւններու ստորագրման առաջին տարելիցի առթիւ լռութիւն կը պահէ Սերժ Սարգսեան, նոյնիսկ նուազագոյն ըսելիք չունենալով ու բացատրութիւն գլանալով իր քաղաքացիներուն:*

*Սակայն, Արձանագրութիւններէն տարի մը ետք մեր բոլորի առջեւ ցցուող հարցը հետեւեալն է. Ի՞նչ շահեցաւ Հայաստանը որպէս երկիր ու ի՞նչ ձեռք ձգեց Թուրքիան: Այս հարցը քաղաքական շրջանակներու կողմէ լայն քննարկման առարկայ է այս օրերուն եւ գրեթէ ընդհանուր տպաւորութիւնը եւ եզրակա-ցութիւնը այն է թէ, Թուրքիա հասաւ իր շատ մը նպատակներուն, իսկ Հայաստան չկարողացաւ ապահովել այն ինչ՝ որուն կը ձգտէր:*

*Արձանագրութիւններու ստորագրման պաշտօնական արարողութեան պահուն իսկ, Թրքական կողմը ներկայացուց իր առաջին նախապայմանը՝ փաստաթուղթերու վաւերացումը կապելով Ղարաբաղեան հարցի գծով յառաջընթացով: Թուրքիա կը պահանջէր հայկական կողմէն զիջումներ, ի նպաստ Ատրպէյճանի: Թէեւ, ան չկարողացաւ ձեռք ձգել իր ակնկալած զիջումները, սակայն այդ Արձանագրութիւններուն շնորհիւ Թուրքիա դարձաւ կարեւոր դերակատար, ոչ միայն Լեռնային Ղարաբաղի բանակցային գործընթացէն ներս, այլ նաեւ ամբողջ տարածաշրջանէն ներս: Այս իրողութեան հետ հաշտուած են արդէն Մինսկի խումբի միջնորդները, որոնք մնայուն խորհրդակցութիւններու կ'ունենան Թուրքիոյ հետ, իրենց յաջորդական քայլերը ճշդելու եւ կամ ղարաբաղի տագնապի լուծման նոր առաջարկներ ներկայացնելու ընթացքին:*

*Թուրքերը հասան նաեւ իրենց երկրորդ նպատակին՝ խոչընդոտելով Հայկական Ցեղասպանութեան ճանաչումը միջազգային հանրութեան ու առաջին հերթին Միացեալ Նահանգներու կողմէ: Այսօր անժխտելի իրականութիւն է, որ Ցեղասպանութեան ճանաչումը դարձած է պատանդ այդ արձանագրութիւններուն եւ շատ հեշտութեամբ կ'օգտագործուի Թուրքիոյ կողմէ, կասեցնելու համար որեւէ նախաձեռնութիւն Եւրոպայի, Ամերիկայի եւ կամ Հարաւային Ամերիկայի տարածքին:*

*Հայկական դիւանագիտութեան ձախողութեամբ ու գործած բազմաթիւ սխալներուն պատճառաւ, Թուրքիա հասաւ իր գլխաւոր նպատակներուն, առանց բանալու սահմանը ու դիւանագիտական յարաբերութիւննր հաստատելու Հայաստանի հետ: Այսպիսով ան գոհացում տուաւ նաեւ իր ազգակից ու դաշնակից Ատրպէյճանին, որ կ'ընդդիմանայ Հայ-Թրքական սահմանի բացման եւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման:*

*Հակառակ տիրող կարծիքին, որ Հայաստան շատ բան տուաւ այս մէկ տարուայ ընթացքին, փոխարէնը չստանալով ոչինչ, իշխանութեան ներկայացուցիչները կը պնդեն, որ ամբողջ աշխարհին հայկական կողմը ապացուցեց իր բարի կամեցողութիւնը եւ պատրաստակամութիւնը՝ լուծելու Թուրքիոյ հետ իր հարցերը:*

*Արձանագրութիւններէն մէկ տարի անց, ժամանակն է որ Հայաստանի իշխանութիւնները անդրադառնան, որ մեծ պետութիւններու թելադրանքով շարժելու ուղղին հեռանկար չունի եւ ժամանակն է չեղեալ յայտարարել այդ գանոնք ու Թուրքիոյ հետ սկսելու համար բանակցութիւններու, որուն մասնակից դարձնելով նաեւ սփիւռքահայութիւնը, որ իրաւատէրն է Հայկական Ցեղասպանութեան զոհերուն եւ իր խօսքը ունի ըսելիք, այդ հարցի վերաբերող բոլոր տասակի համաձայնութիւններուն շուրջ:*

# «ԹՇՆԱՄՈՒ ՋՐԱՂԱՑԸ»

**ԷԴԳԱՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ**

*«Կան բազմաթիւ խնդիրներ, մենք չենք ասում, որ բոլոր խնդիրները լուծուած են- ասում են իշխանութիւնները: - Բայց, - աւելացնում են նրանք, - մենք ունենք լուրջ ձեռքբերումներ գրեթէ բոլոր ոլորտներում եւ փորձում ենք անել հնարաւորը, որպէսզի Հայաստանը դառնայ կայացած ժողովրդավարական երկիր, եւ այս պարագայում բոլոր այն ուժերը, որոնք չեն նկատում այս ամէնը, սեւացնում են ամէն ինչ եւ «եւրախորհուրդների» դռներն են ընկքանի որ երկուսում էլ կայ կոռուպցիա եւ նշանակութիւն չունի, թէ այն ինչ ծաւալ եւ բնոյթ ունի:*

*Նման մտորումներն, անկասկած, բերում են նրան, որ քաղաքական համակարգի փոփոխութեան համար պայքարելու ոչ մի մոտիվացիա մարդկանց մօտ չի առաջանում, քանզի նրանք հաւատում են, որ անկարող են որեւէ էական բան փոխել, մտածում են, որ աշխարհը այդպէս է կառուցուած, ու եթէ մի բան էլ հիմնովին փոխւում է, ապա դա ինքն իրեն է ստացւում, եւ դրա համար շատ երկար ժամանակահատուած է հարնում մեր պետութեան դէմ իրենց բողոքներով՝ ջուր են լցնում թշնամու ջրաղացին»:*

> Մեզանում յաճախ կարող ենք լսել հետեւեալ միտքը. դե բոլոր երկրներում էլ կոռուպցիա կայ, բոլոր պետութիւններում ոտնահարւում են մարդու իրաւունքները, ուրեմն, մենք ոչ մէկից ոչնչով չենք տարբերւում: Սա իւրօրինակ ինքնաարդարացման »մանտրա« է: Եւ ինչքան շատ ես կրկնում այդ միտքը, այդքան աւելի շատ ես հաւատում դրան եւ աւելի շատ ես կորցնում իրականութեան գիտակցումը եւ աւելի ամրապնդում կրաւորական կեցուածքը

*Ո՞րն է այս արտայայտութիւնների նպատակը: Իմ կարծիքով, նպատակը շատ պարզ է. ազդել մարդկանց յոյզերի եւ գիտակցութեան վրայ եւ համոզել նրանց, որ նրանք ի վիճակի չեն արմատականօրէն փոխել ռեժիմը: Իշխանութիւններն այս խօսակցութիւնները հենց այնպէս չեն վարում, դրանք, ըստ երեւոյթին, յատուկ են մշակուած եւ արդէն ապացուցել են իրենց արդիւնաւէտութիւնը ոչ միայն մեզանում, այլ նաեւ արտասահմանում: Ըստ երեւոյթին, վերոնշեալի պատճառը պէտք է փնտռել զարգացող երկրների մարդկանց իւրայատուկ աշխարհընկալման մէջ:*

*Մեզանում յաճախ կարող ենք լսել հետեւեալ միտքը. դե բոլոր երկրներում էլ կոռուպցիա կայ, բոլոր պետութիւններում ոտնահարւում են մարդու իրաւունքները, ուրեմն, մենք ոչ մէկից ոչնչով չենք տարբերւում: Սա իւրօրինակ ինքնաարդարացման «մանտրա» է: Եւ ինչքան շատ ես կրկնում այդ միտքը, այդքան աւելի շատ ես հաւատում դրան եւ աւելի շատ ես կորցնում իրականութեան գիտակցումը եւ աւելի ամրապնդում կրաւորական կեցուածքը: Եւ այդ վիճակում եթէ տեսնում ես, որ իշխանութիւններն ինչ-որ մի չնչին խոստում կատարեցին, ապա ուրախանում ես եւ մտածում, որ դե Մոսկուան էլ մէկ օրում չի կառուցուել, ու շարունակում ես կրաւորական կեանքդ: Հա, համ էլ «թշնամու ջրաղացն» ես լիշում ու վերջնականապէս սսկւում:*

*Այս տեսակի աշխարհհայեացքը բացառում է տարբեր հասարակական եւ քաղաքական համակարգերի գոյութեան փաստը՝ ինչպէս տեսութիւնում, այնպէս էլ պրակտիկայում: Այն ենթադրում է միայն մէկ տեսակի համակարգի գոյութիւն, որտեղ խառնուած են քաղաքական վարքի տարբեր տեսակներ եւ որ, իբր, չի կարելի ասել, թէ որ երկրում որն է շատ, որը քիչ: Ըստ այս աշխարհընկալման, օրինակ, Նորվեգիայի եւ Ադրբեջանի քաղաքական համակարգերը ոչնչով չեն տարբերւում իրարից, կաւոր:*

*Իհարկէ, այս տեսակի գաղափարներն, առաջին հերթին, սերմանւում են աւտորիտար, օլիգարխիկ երկրների իշխանութիւնների կողմից: Ժողովրդավարական հակէլիտայի խնդիրն է խոչընդոտել դրան:*

*«ԼՐԱԳԻՐ»*

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
**Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.

Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

## ՀԱՅԱՍՏԱՆ

### «ՀԱՅՔԸ» ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ԴԱԴԱՐԵՑՆԵԼ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆԱՑՈՒՄԸ

«Ժառանգութեան» կուսակցութեան «Հայք» ուսանողական-երիտասարդական միութիւնը յայտարարութիւն է տարածել ՀՀ ազգային բանակում յաճախակիացած կուսակցական քարոզչութեան դէպքերի առնչութեամբ:

«Մենք խիստ վրդովուած ենք եւ մեր բողոքն ենք արտայայտում Հանրապետական կուսակցութեան եւ յատկապէս նրա երիտասարդական թեւի կողմից կուսակցական PR-ի նպատակով ՀՀ ազգային բանակն օգտագործելու վերջերս յաճախակիացած դէպքերի առնչութեամբ: Բարձրաստիճան հանրապետական պաշտօնեաների կողմից զօրամասեր կատարուող այցելութիւնների ընթացքում տարւում է անսքօղ կուսակցական քարոզչութիւն եւ այդ ամէնը հեռարձակւում է հեռուստատեսութեամբ:

Աւելին, ազգային բանակի զօրամասերը մանկատներ կամ ծերանոցներ չեն, որպէսզի դրանց համար կուսակցական «բարեգործութիւն» իրականացուի: Այս ամէնը ոչ միայն պարզապէս տխուր մտորումների տեղիք է տալիս, այլ ՀՀ Սահմանադրութեան եւ գործող օրէնքների կոպիտ խախտում է, ուղղակի հարուածում է բանակի հեղինակութեանը, ներզինուորական միասնականութեանը:

Մենք դէմ չենք ռազմահայրենասիրական նախաձեռնութիւնների իրականացմանը: Ինքներս էլ՝ թէ միայնակ եւ թէ այլ կուսակցութիւնների երիտթեւերի հետ համատեղ իրականացրել ենք բազմաթիւ այդպիսի միջոցառումներ: Սակայն ՀՀ ազգային բանակում որեւէ կուսակցական քարոզչութեան եւ էժանագին «բարեգործական» ակցիաների իրականացում մեզ երբեւէ թոյլ չենք տուել՝ համարելով դա անթոյլատրելի եւ վտանգաւոր:

Մինչդեռ այս օրէնքները խախտւում են ոչ միայն ազգային բանակում, այլ նաեւ կրթական համակարգում, որը գրեթէ ամբողջապէս վերածուել է հանրապետական կուսակցութեան կցորդի: Կրթութեան հանդէպ նման վերաբերմունքն է կրթութեան որակի անընդհատ յետընթացի պատճառներից մէկը: Ըրպէս հետեւանք, ըստ միջազգային վարկանիշային աղիւսակների՝ ՀՀ բուհերից եւ ոչ մէկը տեղ չի գրաւում աշխարհի բուհերի անգամ առաջին հազարեակում: Բանակի համար է՞լ էք նոյնը պատրաստւում անել:

ՀՀ ազգային բանակը մեր պետականութեան գլխաւոր յենասիւներից է: ՀՀ զինուած ուժերում ծառայում են տարբեր քաղաքական հայեացքներ ունեցող զինծառայողներ եւ մեր սահմանները միասնաբար պաշտպանում են մեր ԲՈԼՈՐ զինուորները՝ անկախ կուսակցական համակրանքներից: Կոչ ենք անում դադարեցնել ՀՀ ազգային բանակի կուսակցականացման-հանրապետականացման փորձերը»:

### ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆ ՀԱՄՈԶՄԱՄԲ՝ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ «ԻՐԵՆ ԽԱԲՈՒԱԾ Է ԶԳՈՒՄ»

Հայ Ազգային Կոնգրէս (ՀԱԿ) ընդդիմադիր դաշինքի համակարգող Լեւոն Զուրաբեանը, լրագրողների հետ հանդիպմանը անդրադառնալով մէկ տարի առաջ Ցիւրիխում ստորագրուած հայ-թուրքական արձանագրութիւններին, նշեց, թէ Սերժ Սարգսեանը «իրեն խաբուած է զգում»:

Նրա խօսքով՝ միայն այն, որ արձանագրութիւնների ստորագրումից մէկ տարի անց պաշտօնական Երեւանը որեւէ յայտարարութիւն չի անում, խօսում է այն մասին, որ Սերժ Սարգսեանը «ուղղակի ասելիք չունի»:

«Սերժ Սարգսեանը երբեք իրեն այդքան խաբուած չի զգացել: Ինքը իսկապէս յոյսեր է փայփայել ու ունեցել է միջազգային հանրութեան խոստումները, որ Թուրքիայի վրայ ճնշումներ կը գործադրուեն եւ ի վերջոյ կը պարտադրեն նրան գնալ այդ արձանագրութիւնների վաւերացմանը: Թէեւ մենք զգուշացնում էինք, որ դա անիրական սպասելիքներ էին», - նշեց Զուրաբեանը՝ շարունակելով. - «Իսկապէս ինքը խաբուած է: Բայց Տէր-Պետրոսեանը շատ դիպուկ դրա մասին ասաց՝ խաբուելը դա արդարացում չէ»:

Հարցին, թէ, իր կարծիքով, ինչու Նախագահը հետ չի կանչում Հայաստանի ստորագրութիւնը, Կոնգրէսի համակարգողը արձագանքեց. - «Դա էլ չի կարող անել, որովհետեւ այդ դէպքում շատ պարարտ հող կը ստեղծի Հայաստանին ապակառուցողական դիրքորոշման մէջ մեղադրելու համար: Ինքը մտել է մի սխալ խաղի մէջ, որից դուրս գալ էլ անգամ չի կարողանում»:

Խօսելով Ղարաբաղի խնդրի մասին՝ Զուրաբեանը նշեց, թէ Ադրբեջանն այսօր միջազգային բոլոր ֆորումներն օգտագործում է Հայաստանի եւ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի վրայ ճնշում գործադրելու նպատակով եւ ստանում է այն, ինչ ցանկանում է:

Ըստ ընդդիմադիր գործչի՝ թէեւ Սերժ Սարգսեանը յայտարարում է բանակցային գործընթացին Լեռնային Ղարաբաղի մասնակցութեան անհրաժեշտութեան մասին, Հայաստանի իշխանութիւնները, սակայն, իրենց իսկ գործողութիւններով հակասում են դրան. դրա «վառ ապացոյցն այն է, որ Հայաստանը համաձայնել է Ղարաբաղում անցկացուող դաշտային առաքելութեանը՝ հաշուի չառնելով այդ հարցում Ղարաբաղի դիրքորոշումը»:

«Այսօր Հայաստանը Ղարաբաղին դարձրել է իրեն կցորդ մի ռեժիմ, որը հլու, հնազանդ լսում եւ կատարում է այն ամէնը, ինչ իրեն թելադրում է Երեւանը: Եւ ես հարց եմ տալիս՝ ինչպէ՞ս միջազգային հանրութիւնը կը յարգի Լեռնային Ղարաբաղի հանրապետութիւնը, եթէ դա չի անում Հայաստանի Հանրապետութիւնը», - ասաց Զուրաբեանը:

Նա տեղեկացրեց, որ Հոկտեմբերի 15-ին եւ 19-ին Կոնգրէսը անցկացնելու է հանրահաւաքներ եւ երթեր: Հանրահաւաքները տեղի են ունենալու Մատենադարանի

### ՆԱԻՐԱ ԶՈՀՐԱԲԵԱՆԸ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆՆԵՐԻՆ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ԲՀԿ-Ի ՀԱՐՑՈՒՄ ԿՈՌԵԿՏ ԼԻՆԵԼ



«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան պատգամաւոր Նաիրա Զոհրաբեան

«Հանրապետական կուսակցութեան մեր գործընկերներին խորհուրդ եմ տալիս իրենց՝ նոյնիսկ շատ ընդհանուր եւ վերացական բնոյթի յայտարարութիւններում շատ զգոյշ եւ կոռեկտ լինել»,- NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում յայտարարեց «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան պատգամաւոր Նաիրա Զոհրաբեանը՝ անդրադառնալով Հանրապետական խմբակցութեան անդամ Գագիկ Մելիքեանի ակնարկող այն յայտարարութեանը, թէ ՀՀԿ-ի համար «թուլացնել թոյլին ուղղակի հակացուցուած է եւ դա ուժեղին յարիր չէ»:

Նշենք, որ ճշդելու համար, թէ «թոյլեր» ասելով՝ հանրապետական գործիչ, արդեօք. նկատի է ունեցել «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեա՞նը, Նաիրա Զոհրաբեանը զանգահարել է ՀՀԿ խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեանին, ով իր հերթին զանգահարել է Գագիկ Մելիքեանին՝ փորձելով ճշդել, թէ վերջինս ասուլիսի ժամանակ նման բան ասե՞լ է: «Գագիկ Մելիքեանը Գալուստ Գրիգորիչին հաւատացրել է, որ ԲՀԿ-ին նկատի չի ունեցել: Ամէն դէպքում, եթէ լրագրողները նման տպաւորութիւն են զգացել, ես հանրապետական մեր գործընկերներին կրկին խորհուրդ եմ տալիս զգոյշ եւ կոռեկտ լինել իրենց՝ նոյնիսկ շատ ընդհանրական ձեւակերպումներում»,- նշեց Նաիրա Զոհրաբեանը՝ աւելացնելով, որ եթէ ձեւակերպումն ուղղուած լինէր ուղիղ «Բարգաւաճ Հայաստանին», Գագիկ Մելիքեանը շատ լուրջ եւ խիստ պատասխան էր տալու իր՝ նման յայտարարութեան համար:

Նշենք, որ Հոկտեմբերի 11-ին, տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ Գագիկ Մելիքեանը հաւաստիացրել էր, որ ՀՀԿ-ն հզօր քաղաքական ուժ է եւ «ոեւէ մէկին, առաւել եւս կոալիցիոն կուսակցութեանը, թուլացնելու նպատակ չունի»: «Մեր նպատակները միտուած են ուժեղացնել ՀՀԿ-ն: Իսկ թուլացնել թոյլին ուղղակի հակացուցուած է եւ դա ուժեղին յարիր չէ»,- ասել էր նա:

### ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ՇԱՐԺՈՒՄ. «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՃ ԺԱՄԱՆԱԿՈՒՄ ՀԵՌԱՆԱԼՈՒ Է ՀԱՅՐԵՆԻ ԲՆՕՐՐԱՆԻՑ»




«Հայաստանի Հանրապետութիւնում լեռնաարդիւնաբերութեան տեխնոլոգիական ցածր մակարդակը գործող հանքավայրերում անդառնալի վնասներ է հասցնում շրջակայ միջավայրին եւ մարդկանց առողջութեանը», ասուել է Սարդարապատ Շարժունի Հոկտեմբերի 12-ին հրապարակած յայտարարութեան մէջ:

Սարդարապատ Շարժումը արցանագրում է-. «Հանքավայրերի շահագործման ժամանակ առաջացած թունաւոր թափօնների ոչնչացումը կամ թաղումը ինչպէս շահագործման, այնպէս էլ շահագործումից յետոյ հետեւանքների վերացման փուլերում կրում են անկառավարելի եւ անվերահսկելի բնոյթ: Բացակայում են հանքավայրերում աշխատող եւ նրանց յարակից տարածքներում բնակչութեան առողջութեան նպատակային ուսումնասիրութիւնները, վիճակագրական համակարգը եւ մարդկանց առողջութեան պահպանման ուղղութեամբ կանխարգելիչ եւ բուժական աշխատանքները: Արդէն իսկ ծանր վնասներ են հասցուել Ալավերդիում, Ախթալայում, Քաջարանում, Դրմբոնում հանքարդունաբերական ձեռնարկութիւնների յարակից տարածքներին, բնութեանը եւ մարդկանց առողջութեանը:

«Շրջակայ միջավայրի եւ մարդկանց առողջութեան իրական վիճակը արտացոլող վիճակագրական տեղեկութիւնների բացակայութիւնն ու տուեալների անհարկի գաղտնիութիւնը իրականում հետապնդում է նպատակ քողարկել առկայ իրական աղետալի վիճակը: Բնութեանը եւ մարդկանց առողջութեանը հասցուող ծանր վնասները հետեւանք են նաեւ էկոլոգիական ստանդարտների, հումանիտար փորձաքննութեան երաշխիքային ենթակառոյցների բացակայութեան»:

«Ուսումնասիրելով եւ փաստելով Զանգեզուրի բնակչութեան վերաբերմունքը եւ նրա կողմից յայտնած անվստահութիւնը նոր հիմնադրուող հանքարդիւնաբերական համալիրների՝ ուրանի հանքերի շահագործման կապակցութեամբ, «Սարդարապատ» շարժման նախաձեռնութիւնը գտնում է, որ այդ ծրագրերի կեանքի կոչելը յղի է ոչ միայն էկոլոգիական եւ առողջապահական աղետով, այլ ուղղակիօրէն վտանգում է ՀՀ ազգային անվտանգութեանը: Հանքերի շահագործումը կը պարտադրի Զանգեզուրի բնակչութեանը կարճ ժամանակահատուածում հեռանալ հայրենի բնօրրանից»:

HayNews.am

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# ԼՈՒՐԵՐ

## ԹՈՒՐՔԵՐԸ ՍԱՀՄԱՆՆ ԱՆՑԵԼ ԵՆ ՈՏԱԲՈԲԻԿ

*Թուրքիայի «Հզօր Թուրքիա» կուսակցութեան առաջնորդը հանդէս է եկել յայտարարութեամբ՝ վերահաստատելով հայ-թուրքական սահմանը հատելու մասին իրենց նախկին յայտարարութիւնը:*

*Հայաստանում ՌԴ անվտանգութեան դաշնային ծառայութեան սահմանապահ վարչութեան պետի տեղակալ, գնդապետ Անդրէյ Գուզէեւը հերքել էր առաւօտեան թուրքական լրատուամիջոցների տարածած այն տեղեկութիւնը, թէ իբր մի քանի թուրքեր հատել են հայ-թուրքական սահմանը:*



Թրքական կուսակցութեան անդամները կը յայտնեն որ այս նկարը կը փաստէ թէ իրենք անցած են սահմանի հայկական կողմը

*Թուրքական «Ջիհան» գործակալութեան փոխանցմամբ՝ «Հզօր Թուրքիա» կուսակցութեան առաջնորդ Թունա Բեքլեւիչը, ի պատասխան Անդրէյ Գուզէեւի հերքման, հրապարակել է իբր հայ-թուրքական սահմանն անցնելու մասին վկայող մի նկար եւ յայտարարել.*

*«Գնդապետ Անդրէյ Գուզէեւը պնդում է, որ մենք չենք անցել հայ-թուրքական սահմանը: Սակայն կան նկարներ, որոնք ապացուցում են հակառակը: Սահմանն անցել ենք ոտաբոպիկ: Աստուած տա՝ յաջորդ անգամ սահմանը բաց լինի, մենք էլ սար ու ձոր չենք ընկնի: Իսկ երբ գանք, նրա հետ թէյ կը խմենք»,- ասել է Բեքլեւիչը՝ աւելացնելով. «Մենք ոչ թէ թշնամանք, այլ խաղաղութիւն եւ եղբայրութիւն ենք բերում»:*

*Յիշեցնենք, որ «Հզօր Թուրքիա» կուսակցութեան ներկայացուցիչները հատել էին հայ-թուրքական սահմանը՝ կոչ անելով կողմերին բացել այն:*

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԿԸ ՊԱՀԱՆՋԷ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուած էջ 1-էն*

*Նախագահները անդրադարձան նաեւ այն հարցին, Ղարաբաղի խնդիրը ինչո՞վ կը տարբերի Քոսովոյի խնդիրէն:*

*Մասնաւորապէս, Սլովինիայի նախագահը ըսած է, թէ ինքնորոշման եւ տարածքային ամբողջականութեան սկզբունքները չեն կրնար գործել ինքնաբերաբար. իւրաքանչիւր դէպք առանձնայատուկ է եւ իւրաքանչիւր դէպքի համար կը պահանջուի ուրոյն լուծումներ, որոնք համահունչ կ՚ըլլան միջազգային իրաւունքի չափանիշերուն, բայց գործնական լուծումը պէտք է ըլլայ տուեալ իրավիճակին համապատասխան:*

*Սերժ Սարգսեանի կարծիքով, Քոսովոյի նախադէպը Հայաստանի համար կարեւոր է այն տեսանկիւնէն որ ՄԱԿ-ի դատարանը յստակ պատասխանեց մէկ հարցի՝ արդեօ՞ք միակողմանիօրէն ինքնուրոյնութիւն հռչակելը կը հակասէ միջազգային իրաւունքին: Պատասխանը, ըստ Սարգսեանի, եղաւ՝ ոչ չի հակասեր:*

## «ԲԱՐԲԱՐՈՍՆԵ՛Ր, ԻՆՉՈ՞Ւ ԷՔ ԼՌՈՒՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ».- ՀԱՐՑՐԵԼ Է ԿՈՒՍՏՈՒՐԻՑԱՆ ՈՒ ՀԵՌԱՑԵԼ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ

*Հոկտեմբերի 9-ին Անթալիայի «Ոսկէ նարինջ» միջազգային կինոփառատօնին մասնակցելու նպատակով Թուրքիայի Անթալիա քաղաք էր ժամանել աշխարհահռչակ սերբ ռեժիսոր Էմիր Կուստուրիցան:*

*Թուրքական լրատուամիջոցների փոխանցմամբ՝ մինչեւ իր ժամանումը եւ դրանից յետոյ ռեժիսորի հասցէին Թուրքիայում քաղաքական գործիչների եւ արուեստագէտների շրջանում հնչող կոշտ քննադատութիւններից յետոյ Կուստուրիցան որոշ յայտարարութիւններ անելուց յետոյ հեռացել է Թուրքիայից:*



Սերբ ռեժիսոր Էմիր Կուստուրիցա

*Անդրադառնալով Թուրքիայի մշակոյթի եւ զբօսաշրջութեան նախարար Էրթուղրուլ Գիւնայի յայտարարութիւններին եւ Թուրքիայում իր դէմ սկսուած արշաւը որակելով որպէս «բարբարոսութիւն»՝ աշխարհահռչակ ռեժիսորը յայտարարել է.*

*«Ես որեւէ քաղաքական կուսակցութեան անդամ չեմ: Այս փառատօնի ժամանակ բախուեցի մի բանի, որն ինձ հետ երբեք չէր պատահել: Այս կապակցութեամբ ինձ պաշտպանել անգամ չեմ ցանկանում, սակայն որոշ բաներ պարզաբանման կարիք ունեն: Անթալիայի քաղաքապետին ջերմ ընդունելութեան համար ցանկանում եմ շնորհակալութիւն յայտնել: Սակայն, միեւնոյն ժամանակ, ցանկանում եմ յայտարարել, որ Թուրքիայի մշակոյթի նախարարին ընկալում եմ որպէս թշնամի: Երբ մի երկրի մշակոյթի նախարար նման յայտարարութիւններ է անում, այդ երկրի փողոցներից մէկում ռեւէ քաղաքացի ինձ կարող է ուղղակի գնդակահարել»,- յայտարարել է Կուստուրիցան՝ քննադատելով նաեւ թուրք ռեժիսոր Սեմիհ Քափլանօղլուին, ով նոյնպէս իր «Մեղր» ֆիլմով հրաժարուել էր մասնակցել կինոփառատօնին:*

*«Եթէ ցեղասպանութիւնների նկատմամբ այդպէս զգացմունքային էք, ինչո՞ւ չէք խօսում Առաջին աշխարհամարտի տարիներին հայերի դէմ իրականացուած ցեղասպանութեան մասին: Ես միշտ դէմ եմ հանդէս եկել Բոսնիայում մարդկութեան դէմ կատարուած յանցագործութիւններին: Եւ եթէ հազար տարի էլ ապրեմ, հազար տարի էլ դէմ եմ լինելու ցեղասպանութիւններին»,- յայտարարել է Էմիր Կուստուրիցան:*

*Յիշեցնենք, որ Թուրքիայի մշակոյթի եւ զբօսաշրջութեան նախարար Էրթուղրուլ Գիւնայը, ինչպէս նաեւ Սեմիհ Քափլանօղլուն յայտարարել էին, որ չեն մասնակցելու «Ոսկէ նարինջ» կինոփառատօնին, որովհետեւ այնտեղ է Կուստուրիցան:*

## ԱՏՐՊԷՅՃԱՆԸ ԿՐԿՆԱԿԻ ՄԵԾԱՑՆՈՒՄ Է ՌԱԶՄԱԿԱՆ ՊԻՒՏՃԷՆ

*2011թ. Ադրբեջանը կ՚աւելացնի պաշտպանութեան ոլորտի բիւջէտային ֆինանսաւորման ծաւալները 89,7 տոկոսով՝ հասցնելով 2 մլրդ 511 մլն մանաթի:*

*Ինչպէս յայտնում է* news.az*-ը, այս մասին յայտարարել է Ադրբեջանի ֆինանսների նախարար Սամիր Շարիֆովը Ադրբեջանի խորհրդարանի լիագումար նիստում:*

*«Պետական բիւջէի նախագծում 2011թ. պաշտպանութեան համար նախատեսուած է 1 մլրդ 325 մլն մանաթի յատկացում: Նաեւ երկրի ռազմական պոտենցիալի ուժեղացմանն ուղղուած յատուկ նախագծերի ֆինանսաւորման համար ծրագրւում է յատկացնել 1 մլրդ 87 մլրդ մանաթ՝ Ադրբեջանի նախագահի հրահանգի համաձայն: Նաեւ որոշակի միջոցներ կը յատկացուեն պետական ներդրումային ծրագրի շրջանակներում»,- ասել է ադրբեջանցի նախարարը:*

## «ԹՈՒՐՔԻԱՆ ԵՏ ԿԱՆԳՆԵՑԱՒ ԻՐ ԽՈՍՏՈՒՄԷՆ»

*Շարունակուած էջ 1-էն*

*մերձեցման երկարատեւ գործընթացում», - կը յայտնէ Հայաստանի արտաքին գործոց նախարարը:*

*«Մեր դիրքորոշումը արտայայտուած էր առանց նախապայմանների յարաբերութիւնների կարգաւորման յայտնի մօտեցմամբ: Այդ սկզբունքի վրայ էր հիմնուած Թուրքիայի հետ բանակցային գործընթացի մեկնարկը: Եւ հենց այս ընդհանուր փոխըմբռնմամբ մենք սկսեցինք, վարեցինք գործընթացը եւ եկանք պայմանաւորուածութիւնների: Միջազգային հանրութիւնը՝ Ջուիցերիացի միջնորդները, ՄԱԿ-ի Գլխաւոր Քարտուղարը, ԵԱՀԿ-ն, ԵՄ-ն, ԱՄՆ-ն, Ռուսաստանը, Ֆրանսիան եւ շատ այլ երկրներ, գործընթացի սկզբից մինչ օրս համամիտ են այս մօտեցման հետ», - կը գրէ Էդուարդ Նալբանդեան՝ աւելցնելով. - «Դժբախտաբար, Թուրքիան ետ կանգնեց պայմանաւորուածութիւնների: Անկարան ոչ միայն մերժեց արձանագրութիւնները վաւերացնել, այլեւ վերադարձաւ այն նախապայմանների լեզուին, որը նա օգտագործում էր մինչեւ գործընթացի մեկնարկը»:*

*«Թուրքիան փորձում է հայ - թուրքական կարգաւորման գործընթացը կապել ղարաբաղեան հիմնախնդրի հանգուցալուծման հետ», - կը յայտնէ Նալբանդեան՝ պնդելով. - «Ղարաբաղեան գործընթացին միջամտելու կամ Հայաստանի հետ իր յարաբերութիւնների կարգաւորումը ղարաբաղեան բանակցութիւններում առաջընթացի սեփական ընկալման հետ կապելու թուրքական կողմի ցանկացած փորձ վնաս է հասցնում երկու գործընթացներին էլ: Սա այն դիրքորոշումն է, որը բազմիցս ընդգծել են Հայաստան - Թուրքիա կարգաւորման եւ ղարաբաղեան հիմնախնդրի հանգուցալուծման բանակցութիւնների մէջ ներգրաւուած բոլոր հիմնական դերակատարները, ողջ միջազգային հանրութիւնը: Միջազգային հանրութիւնը խօսում է մէկ լեզուով, իսկ թուրքական կողմը՝ մէկ այլ լեզուով»:*

*«Թուրքիան նաեւ կեղծօրէն օգտագործում է կարգաւորման գործընթացը՝ որպես շղարշ այն անհիմն պնդման համար, թէ տարբեր երկրներում Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ բանաձեւերի ընդունումը կարող է վնասել կարգաւորման գործընթացին: Մինչդեռ, մենք յարաբերութիւնների կարգաւորման գործընթացի սկզբից ի վեր թէ՛ թուրք գործընկերների հետ շփումներում, թէ՛ հրապարակաւ պարզ ասել ենք, որ Հայաստանը երբեք հարցականի տակ չի դնի Հայոց Ցեղասպանութեան իրողութիւնը կամ դրա միջազգային ճանաչման կարեւորութիւնը», - կը շեշտէ Նալբանդեան՝ աւելցնելով. - «Չնայած նրան, որ Թուրքիան 95 տարի շարունակ ժխտում է Հայոց Ցեղասպանութիւնը, հայկական կողմը չպահանջեց Ցեղասպանութեան ճանաչումը՝ իբրեւ յարաբերութիւնների կարգաւորման նախապայման: Պարադոքսալ է, որ հենց Թուրքիան է փորձում ուղղակիօրէն կամ անուղղակիօրէն շահարկել այս հարցը՝ դարձնելով այն նախապայման»:*

*«Այսօր աշխարհի տարբեր մայրաքաղաքներից ասում են, որ գնդակը թուրքական կիսադաշտում է, որ Հայաստանը ճանապարհի իր բաժինն անցել է, եւ որ Թուրքիան պէտք է ձեռնարկի այն քայլերը, որ նա խոստացել էր կատարել», - իր յօդուածի վերջաւորութեան կ՚եզրակացնէ նախարար Նալբանդեան:*

massisweekly.com

## ԼՈՒՐԵՐ

# ԵՒՐՈՊԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՐԱՒ-ԿՈՎԿԱՍԵԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻՆ ՄԷՋ՝
## ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԻ՞ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ (ՌՈՒՍ-ԵՒՐՈՊԱԿԱՆ ՈՒԺԱՆԻՒԹԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ)

*ՄԻՍԱԿ ԱԴԱՄԵԱՆ*

*Այսօր Եւրոմիութիւնը տակաւին մեղադրուած կը սեպուի...*

*Երկար եւ սպառիչ բանակցական գործընթացէ մը ետք, Ատրպէյճան Յունիս 2010-ին Թուրքիոյ հետ ստորագրեց երեք նոր համաձայնագրեր որոնք կը նպատակադրեն բնական կազի վաճառքն ու փոխադրումը դէպի Եւրոպա: Կայացած այս գործընթացը անպայման որ յատկանշական եւ անկիւնադարձային նկատուի Եւրոպական Միութեան համար, որուն հիմնական նպատակն է նուազեցնել եւրոպական շուկայի կախեալութիւնը Ռուսիոյ ազդեցութեան գօտիէն՝ գէթ ուժանիւթի տեսակէտէ (Ներկայիս Եւրոպայի բնական կազմի 50 տոկոսը իսկ քարիւղի 30 տոկոսը ռուսական աղբիւրէ է): Այսպէս ծնունդ առաւ «Նապուքօ» նախագիծը, որը կը միտի Կասպից ծովու բնական կազը հասցնել մինչեւ Եւրոպա. մօտաւորապէս 8 միլիառ եւրօ արժողութեամբ ծրագիր մը, 3300 քմ. երկարութեամբ խողովակաշարի միջոցաւ, որը Ատրպէյճանը պիտի կապէ Թուրքիոյ (Վրաստանի ճամբով) եւ ապա Եւրոպայի (Պուլկարիա, Ռումանիա, Հունգարիա եւ ապա Աւստրիա) անցնելով անշուշտ Արեւմտահայաստանէն:*

*«Նապուքօ» նախագծի առաջին գործնական քայլերը արդէն իսկ կարելի էր ամբողջացած նկատել երբ տարի մը առաջ Թուրքիա եւ Եւրոպական Միութեան անդամ չորս պետութիւններ (Ռումանիա, Պուլկարիա, Հունգարիա եւ Աւստրիա) ստորագրեցին միջպետական համաձայնագիր մը: Սակայն այս վերջինը որոշ չափով կախեալ մնաց Թուրք-ազերիական յարաբերութեան մէջ ի յայտ եկած կնճիռէն, որը արդիւնք էր հայ-թուրք »յարաբերութեանց« կարծեցեալ ձիւնհալին:*

*Մեկնելով այս իրականութենէն, կարելի է ըսել թէ ԵՄ-ը գալիք օրերուն պիտի ջանայ վերագնահատել իր քաղաքականութիւնը հարաւ-կովկասեան տարածաշրջանի նկատմամբ, զայն կառուցելով երկու հիմնական առանցքներու վրայ.- Եւրոպայի «էնէրկեթիկ» անվտանգութիւնը ապահովել ռուսական աղբիւրներու կախեալութենէն ձերբազատելով եւ այլընտրանքային աղբիւրներ որոնելով, ինչպէս նաեւ ուժեղ եւ յստակ ռազմավարութիւն մշակել Հարաւային Կովկասի տարածաշրջանէն ներս Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին մէջ իր դերակատարութիւնը ամրապնդելով: Ուստի, հետաքրքրական է իմանալ, թէ ԵՄ որքանով պատրաստ է դիմագրաւելու իր առջեւ դրուած այս մարտահրաւէրները:*

*Չնայած տարբեր ծրագիրներու եւ նախագիծերու իրականացումը անցած քանի մը տարիներու ընթացքին, այսօր Եւրոմիութիւնը տակաւին կը մեղադրուի Հարաւային Կովկասի տարածաշրջանէն ներս*




*կազմակերպուած ռազմավարութեան բացակայութեամբ: Որոշ քննադատական ձայներ ու կարծիքներ տակաւին կը լսուին ԵՄ անդամ երկիրներու դիւանագէտներու կողմէ, որոնց կարծիքով ԵՄ-ի գործունէութիւնը ինքզինք խճողած է աւելի «պիւրոկրատական» թղթածրարներու արտադրութեամբ եւ հաստատութենական համակարգի ամրապնդմամբ քան ստոյգ ու գործնական քայլերով եւ աշխոյժ դիւանագիտութեամբ սոյն տարածաշրջանէն ներս:*

*Ներկայիս, ԵՄ քաջ կը գիտակցի թէ «Նապուքօ» կազատարի շինարարութիւնը մէկ կողմէ ուղղակի եւրոպական շուկան պիտի կցէ ատրպէյճանական կազին եւ անկէ՝ ընդհանրապէս կասպեան աւազանի բնական հարստութեանց, իսկ միւս կողմէ ան պիտի ամրապնդէ Եւրոմիութեան (եւ Արեւմուտքի) դերը կովկասեան տարածաշրջանի հակամարտութեանց մէջ, ի մասնաւորի՝ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին, այն տրամաբանութեամբ թէ Ղարաբաղի չլուծուած հակամարտութիւնը թաքնուած սպառնալիք մը կը ներկայացնէ «Նապուքօ»ի անվտանգութեան, միշտ աչքի առջեւ ունենալով 2008-ի ամառուան դառն փորձառութիւնը՝ ռուս-վրացական պատերազմին օրոք:*

*Այս իմաստով՝ ԵՄ չուզեր Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան լուծման գործընթացի «խաղի կանոնները» փոխուած տեսնել, եւ բնականաբար դէմ է այս գործընթացը ՄԱԿ-ի բեմահարթակ տեղափոխելու, ինչպէս նաեւ պատերազմի ճամբով այս հակամարտութիւնը լուծուած տեսնելու նոյնինքն Ատրպէյճանի ճիգերուն, քաջ գիտակցելով որ «սթաթիւս քոյ»ի որեւէ փոփոխութիւն ոչ անպայման բարենպաստ պիտի ըլլայ ԵՄ շահերուն համար, նկատի ունենալով Ռուսիոյ ձեռք ձգած խաղաքարտերու առաւելութիւնը այս տարածաշրջանէն ներս ի դէմս Եւրոպայի ամչկոտ դիւանագիտութեան: Արդարեւ, Ռուսիոյ էս-300 տիպի հակաօդային պաշտպանական հրթիռներ Ատրպէյճանի վաճառելու «առասպելը» եւ միեւնոյն ժամանակ Հայաստանի մէջ Կիւմրիի ռուսական ռազմակայանի պայմանագրի երկարաձգումը այլ բան չէին փաստեր եթէ ոչ այդ՝ որ Ռուսիա կը մնայ տարածաշրջանի տիրական ուժը:*

*Այսպէս ուրեմն՝ Լեռնային Ղարաբաղի «թղթածրարը» պահելով Մինսքի խմբակի շրջագիծին մէջ, Եւրոպա ոգի ի բռին կը ջանայ «օրը նոր - ծրագիրը նոր» այլընտրանքային ուղիներ որոնել Կասպից ծովու հարստութիւնները մատչելի դարձնելու համար ԵՄ շուկային: Եւ բախելով Թուրք-ատրպէյ-ճանական վերոնշեալ թնճուկին, ահա արդէն կեանքի կը կոչուի իբրեւ թէ «Նապուքօ»ն ամբողջացնող, բայց խորքին մէջ անոր մրցակից, այլ ծրագիր մը՝ ԱԿՐԻ-ն (AGRI կամ Azerbaijan-Georgia-Roumania Interconnection) որ Կասպից ծովու բնական կազը պիտի հասցնէ մինչեւ Եւրոպա առանց անցնելու Թուրքիայէն, բան մը որ դուրս պիտի ձգէ այս վերջինը տարածաշրջանի «էնէր-կեթիկ» քարտէսէն եւ աւելի պիտի կնճռոտէ Թուրք-ատրպէյճանական յարաբերութիւնները:*

*Իրերու այս կացութեան մէջ, կը մնայ որ Հայաստան՝ Ռուսաստանի Դաշնութեան «առանձնաշնորհեալ եւ ռազմավարական գործընկերը» կարենայ բարենպաստ պայմաններով ամուր պահել իր դիրքը Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան լուծման գործընթացին մէջ, անկախ այն հանգամանքէն թէ կազատար կամ քարիւղատար ցանցերը ինչ-ինչ դուներ կը բանան տարածաշրջանին մէջ:*

*«ԱՐԱՐԱՏ»*

Հայ news am



# 90-ԱՄԵԱԿ ՍԵՒՐԻ ԴԱՇՆԱԳՐԻՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԱՐԴԱՐ ԴԱՏԻ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԷ ՇԵՐԵՓ ՄԸ

ԱՐԱ ԱՀԱՐՈՆԵԱՆ

Զարմանալի իրողութիւն է, երբ կ՚իմանանք որ նախագահ Ուիլսընի անուան միջազգային կեդրոնը, որ կը գործէ մայրաքաղաք Ուաշինկթըն Տի Սիի մէջ, որոշած էր Թուրքիոյ արտաքին գործերու նախարար՝ Տաւուտօղլուին շնորհել Ուիլսընեան շքանշան՝ իր հանրային ծառայութեան համար:

Վուտրօ Ուիլսըն Միացեալ Նահանգներու 28րդ նախագահն էր: Ան որպէս Սեւրի դաշնագրի որոշումներուն իրաւարար՝ հրապարակեց Հայաստանի վիճակուած քարտէսը՝ Նոյեմբեր 22, 1920ին:

Իսկ իր անուան յիշատակումը յաւերժացնելու համար, 1968ին Միացեալ Նահանգներու Գոնկրէսը ստեղծեց իր անունը կրող միջազգային կեդրոնը:

Այսօր այդ կեդրոնի նախագահ տնօրէնն է, նախկին գոնկրէսական՝ Լի Համիլթըն, որ անցնող Մայիսին յայտարարած է, թէ Ահմէդ Տաւուտօղլուն կը մարմնաւորէ Ուիլսընի կեդրոնի առաջադրանքները, եւ մանաւանդ կը դրսեւորէ Թուրքիոյ յստակ քաղաքականութիւնը: Ակներեւ դարձած է, որ Ուաշինկթըն Տի Սիի մէջ Թրքամէտ ընկերութիւններ լապինկի միջոցով ներկայացուցած են Տաւուտօղլուի անունը: Անցնող 41 տարիներու ընթացքին, շուրջ 150 վարձատրուողներ ստացած են կեդրոնի շքանշանը, որոնք ընդհանրապէս եղած են բժիշկներ, ճարտարապետներ, գիտնականներ, բարերարներ, նախկին դիւանագէտներ, գոնկրէսականներ եւ կամ համբաւաւոր արուեստագէտներ ու դերասաններ:

Զարմանալին այն է, որ նախագահ Ուիլսընի կառավարութեան օրով Հայոց Ցեղասպանութիւնը ճանաչում գտնելու ճամբուն վրայ էր ու հայկական փոքր բայց անկախ պետութիւնն ալ իր իրաւարարութեամբ մօտ 68,000 քառ քլմ. հողամասի մը վրայ պիտի կազմաւորուէր, եթէ քաղաքական զարգացումները բնական ընթացք ունենային Կովկասի մէջ:

Այսօր, երբ Գոնկրէսը կը պատրաստուի լման նիստի, որոշելու համար ճակատագիրը Թիւ 252 առաջադրութեան, որ պատրաստուած է գոնկրէսի Հայկական խմբակցութեան կողմէ, Տաւուտօղու այդ առաջադրութեան ամենաուժեղ հակառակորդն է: Ու Ուիլսընի միջազգային կեդրոնը յարմար տեսաւ շնորհելու «արժանաւոր» դիւանագէտին այդ պարգեւատրումը: Հետաքրքրականը այն է, որ կատարուած յայտարարութենէն քիչ ետք, Լի Համիլթըն իր հրաժարականը ներկայացուց: Արդեօ՞ք տարիքի բերմամբ, թէ անդրադարձած էր կեդրոնի առած սխալ քայլին:

Ցախճապակիի նման դիւրաբեկ եղաւ Սեւրի դաշնագիրը, որուն անունը ֆրանսացի յախճապակի արտադրող ամենէն նշանաւոր քաղաք Սեւրէն կու գայ: Մուսթաֆա Քեմալի նման գազան մը կրցաւ անոր վերջ դնել, անշուշտ հայերու բարեկամ կարծուած դաշնակիցներու օգնութեամբ: Անհրաժեշտ է պատմական յետադարձ ակնարկ մը նետել Վերսայլի մէջ աւարտած դաշնագիրին, որ 1919, Յունիս 28ին ստորագրուեցաւ:

Պատմական կարեւորութիւն ունեցող այդ դաշնագիրը վերջ պիտի դնէր Գերմանական, Աւստրօ-Հունգարական եւ անշուշտ, Օսմանեան կայսրութեանց: Մեծ դաշնակիցներու հետ գործող փոքր դաշնակիցները՝ Լեհաստան, Յունաստան եւ Հայաստան նոյնպէս փորձեցին օգտուիլ այս դաշնագրէն: Ինչ կը վերաբերի Հայկական Հարցին, Վերսայլի համաձայնութեան տրամաբանական շարունակութիւնը հանդիսացող Սեւրի դաշնագրով, կարելի եղաւ Թուրքերուն ընդունիլ տալ Օսմանեան կայսրութեան քայքայումը: Սեւրի դաշնագիրը, Օգոստոս 10, 1920ին Հայաստանի հանրապետութեան կողմէ ստորագրեց Աւետիս Ահարոնեան, իսկ Օսմանեան կայսրութեան պատուիրակութիւնը կը գլխաւորէր Համտի փաշան:

Ա. Հայկական պետութեան կառավարութիւնը կը ճանչցուէր իբրեւ փաստական (de facto) կառավարութիւն:

Բ. Այս ճանաչումը չի կանխորոշեր այդ պետութեան ապագայ սահմաններու խնդիրը:

Հայաստանի ապագայ վիճակին կ՚առնչուէին Սեւրի դաշնագիրին վեց յօդուածները՝ Թիւ 88-93: Այս յօդուածներուն համաձայն, պարտուած Թուրքիան կը ճանչնար Հայաստանը որպէս ազատ եւ անկախ պետութիւն, եւ պատրաստակամ էր նաեւ յանձնելու հայկական չորս վիլայէթները: 89րդ յօդուածը կ՚ընդունէր Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահին իրաւարարութեանը յանձնել Էրզրումի, Տրապիզոնի, Վանի ու Պիթլիսի նահանգները, որոնցմով ծովեզերեայ երկրի պիտի վերածուէր Հայաստանի Հանրապետութիւնը իր Տրապիզոն նաւահանգիստով: Իսկ 92րդ յօդուածի համաձայն, Վրաստանի եւ Ատրպէյճանի հետ Հայաստանի սահմանները պիտի ճշդուէին շահագրգռուող կառավարութեանց կողմէ՝ հաւաքական համաձայնութեամբ մը:

Ուիլսընեան սահմանները հրատարակուեցան ըստ Սեւրի դաշնագրի պայմաններուն, որ Հայաստանի Հանրապետութեան պիտի տար շուրջ 27,000 քառ. մղոն եւ կամ 68,500 քառ. քլմ. նոր տարածութիւն մը Արեւմտեան Հայաստանի տարածքէն:

Բայց Թրքական նոր կառավարութիւնը քեմալական Թակարդ մը կը պատրաստէր՝ Սեւրի դաշնագիրը ձախողութեան մատնելու համար, որովհետեւ դաշնագիրը ստորագրող պետութիւնները չէին վաւերացուցած իրենց ներկայացուցիչներու ստորագրած դաշնագիրը: Նոյն տարուան Յունիսին, հայկական զօրքին կողմէ՝ Օլթի ածխահարուստ քաղաքին անիմաստ գրաւումը պարտուած դարձնելով, Սեպտ. 23ին, Քեազիմ Գարապեքիր փաշայի զօրքերը գրաւեցին Օլթին ու շրջակայքը եւ առանց դիմադրութեան տիրացան Կարսին:

Հայաստանի անհեռատես ղեկավարներուն նուէրն էր այս կորուստը հայ ժողովուրդին: Թրքական այս յառաջխաղացքը արդէն անիմաստ պիտի դարձնէր Ուիլսընեան սահմաններու յայտարարութիւնը նոյն տարուան Նոյեմբեր 22ին, որմէ երեք օր ետք Գարապեքիր Հայաստանի խեղճացած կառավարութեան պիտի պարտադրէր Ալեքսանդրապոլի դաշնագիրը, զոր ստորագրեց Հայաստանի Հանրապետութեան կողմէ Ալեքսանդր Խատիսեան:

Ալեքսանդրապոլի դաշնագիրը ստորագրուեցաւ 1920, Դեկտ. 2ին, վերջ դնելով Սեւրի դաշնագիրի վաւերականութեան: Եւ արդէն Խորհրդային 11րդ բանակը տեղաւորուած էր Հայաստանի Հանրապետութեան սահմաններէն ներս... Ու Հայաստան կը խորհրդայնանար այդ Թուականէն սկսեալ, իր 29, 800 քառ. քլմ. տարածութեամբ:

Այս բոլորէն ետք, կ՚արժէ հարց տալ արդեօ՞ք Սեւրի դաշնագիրը Հայ ժողովուրդի արդար դատին համար կարելի է նկատել երկրորդ Թուղթէ շերեփ մը: Կը յուսանք որ մեր գիտակցութիւնն ու հասկացողութիւնը՝ դիւանագիտական բարձր խաղերու նկատմամբ արթնութիւն ու հեռատեսութիւն պիտի պարգեւէ մեզի՝ Թուղթէ շերեփով ճամբայ չելլելու այլեւս:

Սեւրի դաշնագրի ստորագրութեան 90-ամեակին առիթով, անհրաժեշտ է շեշտել կարեւորութիւնը՝ մեր պատմութիւնն ու անմիջական անցեալի իրականութիւնները հասկնալու եւ առաջնորդուելու իրագործելի ծրագիրներով, խուսափելու համար երազային սայթաքումներէն:




massispost.com
daily news updates



# ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՇԷՆՔԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐԸ ՄԵԾԱՐՈՒԵՑԱՆ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ՇՔԵՂ ՃԱՇԿԵՐՈՅԹՈՎ



*ՄԱՐԻԷԹ ՄԻՆԱՍԵԱՆ-ՕՀԱՆԷՍ*

*Պոլսահայ Միութեան Պաշտօնական բացման հանդիսութենէն մօտ երեք շաբաթներ վերջ, Միութիւնը անգամ մը եւս ուրախութեան շողերով լեցուեցաւ Շաբաթ, Հոկտեմբեր 2, 2010ին, գնահատանքի ճաշկերոյթով մը պատուելով այն բոլոր անդամները, համակիրներն ու բարեկամները, որոնք իրենց սրտաբուխ նուիրատուութիւններով նեցուկ կանգնեցան Միութեան նորակառոյց կեդրոնին շինարարութեան ծախսերուն:*

*Ժամը 7:30 սկսաւ «Քոքթէյլ»ի սպասարկութիւնը, անդամներ, համակիրներ ու բարեկամներ զոյգ-զոյգ կը ժամանէին, վարի յարկը գտնուող «Հրանդ Տինք Դասախօսական Սրահ»ը, կամ վերը՝ գլխաւոր սրահին առջեւ պատշգամի ձեւ ունեցող բաժինը, «Անի» երեակի մելանոյշ մեղեդիներու ընկերակցութեամբ, ուրկէ ժամ մը վերջ առաջնորդուեցան դէպի «Գրիգոր եւ Աւետ Քիւրքչիւօղլու» ճաշկերոյթի սրահը:*

*Ձեռնարկին հանդիսավարն էր Տիկ. Այլին Քէօսէեան որ ձեռնհասութեամբ վարեց երեկոն, նախ բարի գալուստ մաղթելով բոլորին, Հայկական ու Ամերիկեան քայլերգներէն ետք, հանդիսավարը հրաւիրեց բոլորը յոտնկայս յարգանքի տուրք մատուցանելու Միութենէն անդարձ բաժնուած անդամներուն: Երախտագիտութեան հաստատումով ծանօթացուց հիւրերը՝ գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան՝ Բարեխնամ Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի, Հայաստանի Հանրապետութեան հիւպատոս՝ Գրիգոր Յովհաննիսեան, Ս. Պետրոս Հայց. Առաք. Եկեղեցւոյ Հովիւ՝ Տ. Շնորհք Ա. Քհնյ. Տէմիրճեան եւ երէցկինը Լիտիա, ինչպէս նաեւ նոյն եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի ատենապետ Տէր եւ Տիկ. Պարգեւ Համալեան, մամլոյ խմբագիրներ եւ քոյր միութիւններու ներկայացուցիչներ:*

*Ճաշօրհնէքը կատարեց Արժ. Տ. Շնորհք Ա. Քհնյ. Տէմիրճեան: Գեղարուեստական բաժնով բեմ հրաւիրուեցան Վարդան եւ Սիրանոյշ պարի ակադեմիան որոնք ներկայացուցին շատ գեղեցիկ հայկական աւանդական պարեր: Ներկաները դիտեցին* slide show *Միութեան ծնունդէն մինչեւ նորակառոյց շէնքին բացման արարողութիւնը՝ պատկերներ ու յիշատակներ, որոնք մեծագոյն ապացոյցներն են, թէ այսպիսի Միութեան մը հանդէպ մեր բոլորին գոհողութիւնն ու աջակցութիւնը, իւրաքանչիւրս իր լուման տալով որքանով օգնած է մեր յոյսն ու հաւատքը գործի վերածելու:*

*Հանդիսավարը հրաւիրեց Պոլսահայ Միութեան ատենապետ՝ Սիմոն Աճիլաչօղլուն որ իր պատգամին մէջ ուրախութիւն յայտնեց որովհետեւ մեր բոլորիս 34 տարուան երազը իրականացաւ սոյն շէնքին կառուցումով, որպէսզի մեր յաջորդ սերունդները կարենան աւելի դիւրին պայմաններով շարունակել ու յաջողցնել Միութեան առաքելութիւնը: Ան վարչութեան անունով իր ամենասրտագին շնորհակալութիւնն ու գնահատանքը յայտնեց բոլոր նուիրատուներուն անխտիր, առանց որոնց նիւթական օժանդակութեան կարելի պիտի չըլլար այս վսեմ գաղափարը իրականացնել: Ատենապետը փափաք յայտնեց որ այդ օրուընէ սկսեալ նոր էջ մը բանալ ու տէր կանգնիլ նորակառոյց այս Հայ կեդրոնին, վստահ ըլլալով որ մեր յաջորդ սերունդները պիտի գիտակցին մշակութային եւ ընկերային Միութեան մը դերը համայնքի մէջ եւ պիտի շարունակեն տէր կանգնիլ Պոլսահայ Միութեան: Բացատրութիւն տուաւ Միութեան վեց տարիներու աշխատանքին ընթացքին մասին: Շնորհակալութիւն յայտնեց նաեւ միութեան իւրաքանչիւր հիմնադրին, նախկին եւ ներկայ մայր վարչութեան եւ յանձնախումբերու բոլոր ատենապետ եւ ատենապետուհիներուն եւ անոնց գործակից ընկերներուն, որոնց շնորհիւ Միութիւնը հասած է նախանձելի մակարդակի մը: Նաեւ շնորհակալութիւն յայտնեց Միութեան աշխատանքներուն իրենց բաժինը բերող ճարտարագէտ Արեթ Պինաթլըին եւ Փօլ Պէզիրկանեանին, գրքոյկի եւ ճաշկերոյթի պատրաստութեան պատասխանատու անձերուն, Միութեան ֆոնտերու տէրերուն, օրուան հանդիսավար Տիկ. Այլին Քէօսէեանին, Րուպինա Զատէրէրին եւ Տէր եւ Տիկ. Էտի եւ Թալին Սարաֆօղլուին: Շնորհաւորութիւններ յայտնեց Տէր եւ Տիկ. Սարօ եւ Տէր եւ Տիկ. Րաֆֆի Մարութեաններուն որոնք արժանի տեսնուելով ստացան Գրիգոր Լուսաւորիչ Շքանշանները ձեռամբ՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Շնորհակալիքներ նաեւ Տիար Բէքլար Փիլաւճեանին որ քաղաքապետութեան կարգ մը անլուծելի պահանջքները լուծելի դարձուց, նաեւ Ս. Պետրոս Հայց. Առաք. Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի անդամներուն ատենապետութեամբ՝ Տիար Պարգեւ Համալեանին, որոնք սիրայօժար տրամադրեցին սենեակ*

*Շար.ը էջ 19*

# ԿՀԳՄ ՏՕՆՈՒՄ Է ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՕՐԸ

*Գրողները համախմբուել են Կլենտէյլի Հանրային Գրադարանի դահլիճում: Տօնակատարում են Հայ Մշակոյթի Օրը իրենց ստեղծագործութիւններով: Պահը տօնական է, գեղուն հպարտութեան զգացումով, նուիրումի խոստումով, արտայայտութիւնների հաւաստութեամբ: Երեկոն մեկնարկում է ԿՀԳՄ նախագահ բանաստեղծ Գրիշ Դաւթեանը: Ողջունում է ներկաներին, շնորհաւորում է Մշակոյթի Օրը. շնորհաւորում է գրող Ռ. Կորիւնի «Արեւմուտ իմ երկիր» խորագրով հատորի նոր լոյս ընծայումը. ուրախութեամբ է ողջունում անակնկալ հիւրի... Պոլսոյ Մարմարա Օրաթերթի փոխխմբագիր, Պոլսոյ Սբ. Փրկիչ Հայոց Հիւանդանոցի Պարբերաթերթի խմբագիր, գրող Մաքրուհի Յակոբեանի այցը Լոս Անճելոս, եւ վարչութեան հրաւէրով նրա ներկայութիւնը երեկոյթին. հրաւիրում է նրան ամպիոն իր խօսքը ուղղելու ունկնդիրներուն: Հիւրը արժանանում է ներկաների ողջոյնին. ջերմանում է մթնոլորտը: Մաքրուհի Յակոբեանը ողջլերուքի սրտագին նախաբանից յետոյ կարդում է «Հայկական հետքեր եւ անցեալի ապրումներու ոգեկոչում՝ Վանի փողոցներուն մէջ» խորագրով ուղեգրութիւնը. պատմական աղերսները իւրովի են յուզում իւրաքանչիւրին: Այնուհետեւ, ԿՀԳՄ քարտուղար, բանաստեղծ Գարուշ Հարեանցի նախագահութեամբ նիստը շարունակւում է: Սեփական ստեղծագործութիւնների ընթերցումով ելոյթ են ունենում գրողներ՝ Արաքս Նաւասարդեանը, Ներսէս Տէր-Մեսրոպեանը, Արծրուն Ալեքսանեանը, Մարի Գարալեանը, Կիմա Կիրակոսեանը, Ժագ Յակոբեանը, Նշան Բաղդասարեանը, Գրիշ Դաւթեանը, Երուանդ Իսկանդարեանը, Պօղոս Գուբելեանը, Հրաչ Մանուկեանը, Հենրիկ Անասեանը, Ջանիբեկ Ջանիբեկեանը, Վազգէն Աբովեանը, Սոնա Դաւթեանը... Գրողների խուռներամ բոյլը... Եւ դեռ դժգոհութիւն է ծաւալւում, որ ոմանց հերթ չհասաւ: ԿՀԳՄ վարչութեան անդամ բանաստեղծ, գրականագէտ Գէորգ Քրիստինեանի եզրափակիչ խօսքով աւարտւում է նիստը:*

*ԿՀԳՄ յառաջիկայ միջոցառումներն են.*

*Շնորհանդէս գրող Խորէն Արամունիի «Խրամատից դուրս» գրքի: Գրական արժեւորում կը ներկայացնի գրականագէտ Ալվարդ Ուզունեանը: Տեղի կ'ունենայ Զորեքշաբթի, Հոկտեմբերի 20ին երեկոյեան ժամի 7ին, Հայ Կաթողիկէ Առաջնորդարանի սրահում, 1510* East Mountain St, Glendale CA 91207*: Մուտքը ազատ է. հիւրասիրութիւն:*

*Յուշ յոբելեան բանաստեղծ Նշան Շահէնի, տեղի կ,ունենայ Շաբաթ, Հոկտեմբերի 30, երեկոյեան ժամի 6ին, Կլենտէյլի Հանրային Գրադարանի դահլիճում, 222* East Harvard St, Glendale CA 91205*: Մուտքը ազատ է, հիւրասիրութիւն:*

***ԿՀԳՄ***

ArmenienInfo.net
News. Informationen. Kommentare.

Ընկերային Խրախճանք

Կազմակերպութեամբ՝
Ս.Դ.Հ.Կ.
ՓԱՐԱՄԱԶ
ՄԱՍՆԱՃԻՒՂԻ

Երեկոն կը խանդավառէ՝
Վաչէ Յակոբեան
եւ իր նուագախումբը

Շաբաթ, 16 Հոկտեմբեր 2010
երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ
«Կարօ Սողանալեան» սրահին մէջ
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

Մուտքի Նուէր՝ $25.00

Տոմսերու համար դիմել՝
ՓԻՐԱՅՐԻՆ
(626) 833-4871



# «ԵՐԵԿՈՅ ՄԸ ՄՏԱՒՈՐԱԿԱՆԻ ՄԸ ՀԵՏ» ՀԻՒՐ՝ ՌԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ



*Հ.Բ.Ը.Մ.-ի Ասպետներու Համախմբումը հպարտութեամբ կը ներկայացնէ հանդիպում՝ Նորին գերազանցութիւն Տիար Ռաֆֆի Յովհաննիսեանի հետ, որ մաս կը կազմէ Ասպետներու ամենամեայ «Երեկոյ մը Մտաւորականի մը հետ» ծրագրին: Ծնունդով ամերիկահայ քաղաքագէտ եւ Հայաստանի Հանրապետութեան առաջին արտաքին գործոց նախարար Ռաֆֆի Յովհաննիսեան յատուկ ելոյթ մը պիտի ունենայ Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան Վարժարանի հանդիսասրահին մէջ, Ուրբաթ, Նոյեմբեր 4, 2010ին, երեկոյեան ժամը 8:00ին, հրաւէրովը Հ.Բ.Ը.Մ.ի Ասպետներու վարչութեան:*

*Դասախօսութեան խորագիրն է՝ «Հայաստան Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ, ժողովրդավարութեան, ինքնիշխանութեան եւ ազգային շահերու մարտահրաւէրները»:*

*Դասախօսութեան աւարտին ներկաները իրենց հարցումները պիտի կարենան ուղղել օրուան հիւրին: Մուտքը ազատ է եւ յայտագիրի աւարտին տեղի պիտի ունենայ հիւրասիրութիւն:*

*Ռաֆֆի Յովհաննիսեան շրջանաւարտ է UCLAի, Georgtown University Law Centerէն եւ The Fletcher School of Law and Diplomacy Tufts University-էն: Իր շարք մը կոչումներուն կողքին, ան ղեկավարն է Հայաստանի «Ժառանգութիւն» կուսակցութեան, հիմնադիրը Հայաստանի Իրաւաբաններու Ընկերակցութեան եւ հիմնադիր-տնօրէնը Հայաստանի Ազգային Ռազմավարական Կեդրոնին՝ Երեւանի մէջ:*

*Հ.Բ.Ը.Մ.ի Ասպետներու Շրջանակի հովանաւորները պիտի ստանան Ռաֆֆի Յովհաննիսեանի որդւոյն Կարին Յովհաննիսեանի «Family of Shadows» նորատիպ հատորէն մակագրուած օրինակներ:*

*Այս միջացառումին առիթով Ասպետներու ՇՐՋանակին անդամագրուելու համար, կը խնդրուի կապուիլ Հ.Բ.Ը.Մ.ի Փասատինայի Կեդրոնի գրասենեակ, հեռ. (626) 794-7942, e-mail՝ asbeds@agbuca.org*

# «ԱՍՊԱՐԷԶ» ՅԱՋՈՂՈՒԹԵԱՄԲ ՊՍԱԿԵՑ ԻՐ ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ

*Կիրակի 3 Հոկտեմբեր 2010-ին «Ասպարէզ» օրաթերթը կազմակերպած էր իր տարեկան ճաշկերոյթը, որ տեղի ունեցաւ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ «Բաղրամեան» հանդիսասրահին մէջ, եւ որուն հանդիսավարութիւնը վարեց Քնար Քորթոշեան:*

*Մշակոյթի օրուան զուգադիպող ներկայ ձեռնարկին՝ օրաթերթի խմբագրութեան յատուկ գնահատանքին արժանացան «Ասպարէզի» եւ Հորիզոն» հեռուստատեսիլի կայանի անձնակազմէրէն ներս երկար տարիներ ծառայութիւն մատուցած Յասմիկ Փանոսեան, Շաքէ Աճէմեան, Արմինէ Զարիֆեան, Գէորգ Մանոյեան, Րաֆֆի Ղորղորեան, Ալիս Պետրոսեան եւ Մարօ Քէշիշեան:*

*Իրենց համառօտակի ելոյթներով խօսք առին «Ասպարէզ»ի գլխաւոր խմբագիր Աբօ Պողիկեան եւ անգլերէն բաժնի խմբագիր Արա Խաչատուրեան, որ գնահատեց «Ասպարէզ»ին եւ «Հորիզոն»ին նեցուկ կանգնած բոլոր անձերուն ու հաստատութիւններուն զօրակցութիւնը: Տեսաերիզի վրայ իր ողջոյնը փոխանցեց ԱՄՆ-ի Ներկայացուցչական Տան անդամ Էտըմ Շիֆ:*

*Այնուհետեւ, Մշակոյթի Օրուան տօնական առիթով, Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմէ առաքուած կոնդակի արժանացած՝ հայ մշակոյթի եւ կրթական կեանքի երախտաւորներ Անահիտ Մէյմարեանի, Յասմիկ Թաշճեանի (յետ մահու), Ռիթա Որբերեանի, Հայկուշ Գեղինեան Քոհլըրի եւ Քնար Մանճիկեանի լամբակները Մեսրոպ Մաշտոցի շքանշանով զարդարեց Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան: Շնորհակալական ամփոփ սրտի խօսքով հանդէս եկան յարգելի շքանշանակիրները, խոստանալով իրենց կարելիութեան սահմաններուն մէջ շարունակել իրենց ծառայութիւնները համայնքին եւ ազգին:*

*Նրբերանգների իւրօրինակ հաւաքածու է յիշեցնում «ՆՇԵՆԻ» ժողովածուն: «Նախաբանի փոխարէն» ինքնակենսագրական համառօտ ակնարկում բանաստեղծը նշում է մի քանի անցքեր, որոնք վճռորոշ դեր են խաղացել իր բանաստեղծական ձեւաւորման գործընթացում, երբ խոստովանում է, թէ «քսաներկու տարեկան հասակում ունէի դերձակատուն Թեհրանում:... երբ կտորը փռում էի սեղանին ձեւելու համար, նախ մի տուն գրում էի, եթէ յաջող էր գտնւում, քաշում էի տետրակիս մէջ...»: Դերձակն էլ ինչո՞վ պիտի գրէր, եթէ ոչ կաւիճով, էլ ինչի՞ վրայ պիտի գրէր այդ պահին, եթէ ոչ կտորի... Դիպուկ յիշողութեան մտաբերում է սա, որ մատնանշում է նուիրուածութիւնը հայեցի բառ ու բանի հանդէպ: Պարզ ու հասարակ թուացող մի յիշեցում եւս՝ անուրանալի կեանքից, որին պարտական է մնացել հեղինակն առ այսօր: Անկեղծութեան չափաբաժինը բաւարար չէր լինի, եթէ մէջբերում չանէինք հետեւեալն էլ: Երբ բանաստեղծը լինում է 15-16 տարեկան անհանգիստ պատանի, որոշում է ջութակահար դառնալ: Հնոտիների խանութից ճարում է մի ջութակ: Առնում-բերում է տուն եւ սկսում պարապել: Երեւի ուղեղ սղոցող ճզրվզրի պատճառով մեծ եղբայրը ջարդում է երաժշտական գործիքը: Ապագայ բանաստեղծը որոշում է զբաղուել այնպիսի մի բանով, որ էլ եղբայրը չկարողանայ ջարդել... ուստի եւ սկսում է գրել... գրողի ի՞նչը ջարդես, գրի՞չը, մատիտով կը գրի, մատի՞տը ջարդեցիր, կաւիճով, քարածուխով կը գրի, այն է՞լ խլեցիր, իր մտքում կը գրի, դէ գնա ու միտքը ջարդիր, տեսնեմ՝ կը յաջողուի՞... հեղինակային համեստութիւնը գրաւոր հաւաստելու համար պնդենք, որ աւելորդ ճիգ ու ջանք չկայ: Խորամանկութիւն էլ չկայ անկեղծութեան հարցում, որով առաջնորդւում են ոմանք, որ դուր գան ընթերցողին, համակրանք շահեն: Սակայն ի տարբերութիւն գրչակից ոմանց, Փանոս Վարդանեան հեղինակը հայրենասէրի քաղաքացիական պատասխանատուութեամբ շարունակում է խօսել մեր ժամանակների քաղաքական բարքերի մասին եւս, դա լիիրաւ վկայում է նրա «Իշխանաւորներին» վերնագրեալ բանաստեղծութիւնը.*

Ինչո՞ւ թռչունները
Հեռացան կանաչ
Մեր մարգագետնից,
Խռով գնացին:
Ինչո՞ւ սէրը դուք
Սրտին չտուիք,
Վարդը սոխակից,
Սոխակները ելան,
Կարօտ գնացին:
Ինչո՞ւ փակեցիք
Ակն աղբիւրի,
Տոչոր սրտերը
Ծարաւ գնացին:
Ինչո՞ւ չհաշտուեցիք
Որդիների հետ,
Սրտները խոցուած՝
Անդարձ գնացին:
.................................
Ասէք, ա՜խ, ինչո՞ւ (էջ59)

*Սուրբ հարցադրման դիրքորոշում է սա, որ ստոյգ պատասխան է ակնկալում, ոչ թէ մի հերթապահ ու խաբուսիկ մօտեցում, բարբառով ասած՝ «գելթօղի»: Ահաւասիկ, նման անթաքոյց դատողութիւն որդեգրած բանաստեղծի հետ ինչպէ՞ս չհամաձայնես ու չսեղմես նրա աջը, թէկուզ Ամերիկեան ովկիանոսային այս բարեխառն հեռաւորութիւնից: Զէ, Սայաթ-Նովայի ասածի պէս՝ Փանոս Վարդանեան բանաստեղծի «բունիաթըն աւազ չիմանաս, քարափ է, քարուկըրեն է» «Նշենի» ժողովածուն թէեւ 168 էջերում անհաւասար է ծաղկում, բայց փորձում է պտղակալել յաջորդաբար, համ ու բոյր տարածել իր չորսդին...*

*Հայրենասիրութեան ու հայրենաբաղձութեան հետաքրքիր մի համանուագ է «Կռունկ» ժողովածուն (Երեւան, 2004 թ.), որ լրացնում է ասես նախորդ երկու գրքերի գերխնդիրը՝ նպատակը մղելով առաջին հորիզոնական: Փառք Աստծոյ, յոյզերը չեն թակում լալկանութեան դարպասները: Աւելին, չափածոյ համարձակութիւնը հեռու է պահում ընթերցողին՝ նաեւ մտավախութիւնից: Սայթաքումները հազուադէպ են: Հաւասարակշռուած են միջանցիկ եւ հակամիջանցիկ գործողութիւնները, որոնց հաշուեկշռի շնորհիւ էլ իրականում բանաստեղծի ներաշխարհի ամբողջականութիւնն է ապահովագրուած: Հայ ժողովրդի բազմադարեայ պատմութեան մէջ կարեւոր դեր ու նշանակութիւն ունեն ներգաղթն ու արտագաղթը: Անգամ Տիգրան Մեծի օրօք կազմակերպուած ռազմաքաղաքական ներգաղթն իր հետ բերել է նաեւ գերեվարուած այլազգիների՝ հրեաների, յոյների, բուլղարների, ասորիների հոծ խմբեր: Գուցէ դա է եղել արքայից արքայի պատմական սխալը, որ այսօրուայ հայ վանեցիների նախահայրերը կասկածւում են օտարազգի կենցաղավարութեան մէջ, առաջին հերթին՝ հրէական... Մեր ազգի էթնիկ մաքրութիւնը կասկածի տակ է հենց այս պատճառով, բայց ի՞նչ արած, մենք էլ այսօր ենք ապրում Մեծն Տիգրանի ծննդից 2150 տարի անց, այն ժամանակուած 385 հազար քկմ տարածքի փոխարէն՝ ժառանգելով խղճուկ մի մասը միայն՝ 29 քկմ.ը... որի ազատագրման հարցում դիտմամբ մեղաւոր են ճանաչում յաղթող կողմին: Համաշխարհային պատմութիւնը դեռեւս չի արձանագրել նման զաւեշտալից փաստ, որ յաղթանակ տարած երկրին, մեր հայրենիքին պայմաններ առաջադրուեն, աւելին՝ պարտադրուեն... Ոչ, բացականչում է բանաստեղծը,*

Հայրս դու ես ու իմ մայրը՝ ծովն է Վանայ,
Մեր սրբավայր ու վեհաշուք Աղթամարից ես պիտի գամ... (էջ 37)

*Հայրենասիրութեան բաղձալի հանգրուան, որի շուրջն այսօր էլ բանակցութիւններ են վարւում, որ լեգենդար եկեղեցին խաչ ունենայ նորէն: Թուրքիոյ կառավարութիւնը (մեր երկիրը ներխուժած սինլքոր սելճուկ Տուղրիլի ծոռնծոռի ծոռը) «բարեհաճել» է թոյլ տալ տանտիրոջը՝ մոմ վառել՝ իր նախնեաց յիշատակի առջեւ... սրանից մեծ խեղկատակութիւն անհնար է պատկերացնել: Եւրոպա սողոսկելու Թուրքիոյ ճիգերը Շահ Աբբասի վարած բռնակալ քաղաքականութեան նման մի օր կը գգետնուեն հայոց միասնականութեան յարուցեամբ: Այդ են վկայում ներքոնշեալ տողերը.*

Հիմա էլ յառաջ մենք կամքով արի՝
Վասն քաջերի թափած արիւնի
Յաւերժ պահպանենք յոյսերով յաման
Մեր հայ աշխարհի արեւը պայծառ...
(էջ 55)

*Հեղինակի լաւատեսութիւնը դարձել է հաւատամք, յանուն որի արարւում են գրեթէ բոլոր տողերն ու տողատակերը: Խորագրերը ոչ թէ մտացածին են, այլ մտածուած են, նպատակայնօրէն կշռադատուած՝ իրենց անսայթաք լուծումներով: Զես կարող չզարմանալ Փանոս Վարդանեանի աշխատասիրութեան վրայ: Չնայած իր խոստովանութեանը, թէ «շատ կարդում էի, քիչ գրում», անհնար է կռահել, չգիտենք որքան ժամանակ է ընթերցանութեանը յատկացնում, բայց որ շատ է գրում, դա հիմա փաստ է: Թեմաները թէեւ կրկնւում են, սակայն ասելիքը որոնում-գնում է արտայայտուելու ի՛ր եղանակը, քանզի «մարդ աւերիչը»*

*Շար.ը էջ 17*

# ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՅՈՒԼԻՍ 6, 7, 2010

*Այս տարի կրկին Կիւլպէնկեան Մատենադարանին մէջ կայացաւ հերթական միջազգային համագումարը Սուրբ Երկրի Հայոց Պատմութեան ջուրջ:*

*Այս տարի իբր նիւթ ընտրուած էր, "Հայերը Պաղեստինի մէջ 19-րդ դարուն":*

*Համագումարը տեւեց երկու օր՝ Մասնակցութեամբ 20 գիտնականներու: Համագումարին զեկուցումները սկսան երեքշաբթի առաւօտ, 6 Յուլիսին, Գալուստ Կիւլպէնկեան Մատեդարանի սրահին մէջ: Բացումը կատարեց Ս. Աթոռոյս Լուսարարապետ Գերշ. Տ. Նուրհան Արք. Մանուկեան: Նուրհան Արք. գոհունակութեամբ նշեց կարեւորութիւնը նման ձեռնարկի մը եւ գնահատեց կազմակերպիչներու աշխատանքը: «19-րդ դարը Պաղեստինի մէջ հանդիսացաւ անկիւնադարձ մը քրիստոնէական հաստատութիւններու կազմաւորման մէջ: Հայեր յատուկ դեր խաղցան կարգ մը մարզերու մէջ նաեւ Հայոց Պատրիարքարանը ենթարկուեցաւ մեծ փոփոխութիւններու եւ 5 նոր հաստատութիւններ ստեղծուեցան...», ան ըսաւ իր խօսքին մէջ: Ան նաեւ իր երախտագիտութիւնը յայտնեց Կիւլպէնկեան հաստատութեան եւ ս. Սարգիս հիմնարկին, այս ձեռնարկը հովանաւորելուն համար: Ան նաեւ շնորհակալութիւն յայտնեց Աստղիկ Զամքէրթճեանին, իր մշտական աջակցութեան համար եւ գնահատեց իր անձնական ներկայութիւնը եւ մասնակցութիւնը:*

*Մատենադարանին տնօրէնը՝ Հոգշ. Տ. Նորայր Վրդ. Գազազեանը, իր շնորհակալութիւնը յայտնեց գիտնականներուն, իրենց մասնակցութեան համար այս կարեւոր հաւաքին եւ յոյս յայտնեց, որ յաջորդ երկու օրերը արդիւնաւոր կ՛ըլլան: Տիար Գէորգ Հինդլեան, համագումարին համադրողը, յոյս յայտնեց, որ այս մտաւորական հաւաքը զգալիօրէն պիտի նպաստէ 19-րդ դարու մեր հասկացողութեան՝ աւելցնելով մեր պատմական գիտելիքները այդ ժամանակաշրջանին շուրջ: Իր շնորհակալութիւնը յայտնեց, նաեւ, արտասահմանեան մասնակիցներուն, որոնք յատուկ ճիգ ըրին ներկայ գտնուելու համագումարին, նոյնիսկ բացակայելով իրենց դասընթացներէն:*

*Առաջին զեկուցողն էր Պրոֆ. Այտա Պուճիգանեան, հանրածանօթ գիտնական մը, որ կը մասնագիտանայ սփիւռքի ներքին կառուցներու տինամիքայի շուրջ: Պրոֆ. Պուճիգանեան ընտրած էր հետեւեալ նիւթը՝ "Երուսաղէմի Առանձնայատկութիւնը Հայոց Պատմութեան համար": Տիկին Պուճիգանեան շատ հետաքրքիր ձեւով նկարագրեց, թէ որքան կեդրոնական տեղ կը գրաւէր Երուսաղէմը հայ հաւատացեալի երեւակայութեան եւ գիտակցութեան մէջ, նաեւ բացատրեց, թէ ինչպէս ամէն հայկական քաղաք եւ գիւղ յատուկ գանձանակ ունէր Երուսաղէմի համար եւ մանաւանդ Ս. Տեղեաց պայծառութեան ահամր: Ան մանրամասնեց հայ հասարակութեան տարբեր խաւերու զօրակցութիւնը՝ իբր տիպար ունենալով Յարութիւն Ամիրա Պէզճեանը, որ խորհրդական էր սուլթան Մահմուդ Բ-ի, կեդրոնանալով իր բազմաթիւ ծառայութիւններուն ի շահ Երուսաղէմի Ս. Տեղեաց պաշտպանութեան: Տիկին Պուճիգանեան աւելցուց, որ շատ հայ ազգայիններ հետեւեցան իր օրինակին եւ նպաստեցին Երուսաղէմի հարցերու լուծման:*



*Երկրորդ զեկուցողն էր Գէորգ Հինդլեան, որ մանրամասն նկարագրեց փոփոխութիւնները, որ կերպարանափոխեցին Հայոց Պատրիարքարանը: Թուեց նաեւ արտաքին նոր ազդակները, որ փոխեցին միջավայրը, մարդկային մթնոլորտը եւ նպաստեցին քաղաքաշինութեանը: Հայոց Պատրիարքարանը նոր թափով ձեռնարկեց շինութիւններու եւ հաստատեց նոր ենթակառոյց: Ամփոփելով, պրն. Հինդլեան աւելցուց. «19-րդ դարը Հայոց արդիականացման եւ հաստատութիւններու ամրապնդման շրջանն է, որուն բարիքները մինչեւ այսօր կը վայելենք: Շնորհիւ այս խորաթափանց փոփոխութիւններուն Հայոց Պատրիարքարանը կրցաւ դիմանալ յետագայ ցնցումներուն եւ փոձութիւններուն»:*

*Տօքթ. Թոմաս Համէլ անդրադարձաւ յատուկ յարաբերութեան, որ Հայոց Պատրիարքարանը ունէր Երուսաղէմի Եւրոպական հիւպատոսարաններու հետ իրենց հաստատումէն քիչ մը վերջ 19-րդ դարուն: Տօքթ. Համէլի ուսումնասիրութիւնը ցոյց տուաւ, որ հայերը աւելի բարւօք եւ առանձնայատուկ մշակութային, քաղաքական եւ էքումէնիք յարաբերութիւններ ունէին, քան թէ միւս եկեղեցիները յայտնի պատճառներով: Ան նշեց, որ այն հիւպատոսարանները, որ Ս. Տեղեաց մտահոգութիւններ չունէին աւելի դրական եւ անշահախնդիր յարաբերութիւններ ունէին Հայոց Պատրիարքարանին հետ: Աստուածաբանական պատճառներով հայերը լաւ յարաբերութիւններ ունէին բողոքական մարմիններու հետ եւ չունէին պրկուած յարաբերութիւններ ինչպէս որ գոյութիւն ունէին Օրթոտոքսներու եւ Լատիններու հետ: Տօքթ. Համէլ թուեց արքայական պաշտօնական այցերը Երուսաղէմ քաղաքի եւ իրենց այցելութիւնները Հայոց Պատրիարքարան: Տօքթ. Համէլ, որ զեկուցումը վերջացուց յիշելով Եսայի Պատրիարքի դերը Եթովպիոյ դեսպանին ազատագրման գործին մէջ՝ Վիքթորիա Թագուհիին խնդրանքով, եւ այս ալ միջ-եկեղեցական խողովակներով:*

*Կէսօրը մասնակիցները հիւրասիրուեցան ս. Յակոբեանց միաբանութեան սեղանատանը, ուր համտեսեցին հայկական ճաշեր:*

*Յետ միջօրէին, առաջին զեկուցողն էր Հոգշ. Տ. Կորիւն Վրդ. Պաղտասարեան, որ շատ փայլուն ձեւով ամփոփեց իր համալսարանական թէզը Հայ համայնքի կրթական համակարգին մասին 19-րդ դարուն: Հայր Կորիւն մանրամասն վերաքաղ մը ըրաւ յիշելով ինչպէս հաստատուեցաւ առաջին դպրոցը 1863-ին, ան շեշտեց որ Հայոց Վարժարանը հանդիսացաւ առաջին երկսեռ դպրոցը Երուսաղէմի հին քաղաքին մէջ: Հայր Կորիւն խօսեցաւ վարժարանի սկզբնական տարիներու շուրջ, հասաւ մինչեւ երկրորդական մակարդակին, երբ վարժարանն ունէր 500 ուսանողներ: Ան դրուատեց երջանկայիշատակ Կիւրեղ Եպս. Գաբիկեանի վաստակը եւ ջանքերը, եւ անոր նկատեց որպէս գլխաւոր ճարտարապետը վարժարանի բարգաւաճման եւ ուսման մակարդակի բարձրացման:*

*Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալճանեան անդրադարձաւ ս. Փրկչի գերեզմանատան շիրիմներու արձանագրութիւններուն՝ շեշտելով 19-րդ դարը: Հայր Գուսան յիշեց իր ընծայարանի ուսանող եղած ատենը, երբ մասնակցած էր ֆրանսահայ արշաւախումբի մը շիրմաքարերու արձանագրութիւնները հաւաքելու աշխատանքներուն: Հայր Գուսան նշեց, որ այս արձանագրութիւնները ունին բանաստեղծական եւ բարեպաշտական խորք: Այս շիրմաքարերը կը հիւսէին փառքը անթիւ ուխտաւորներու, որ մեծ երանութիւն կը զգային իրենց յաւիտենական հանգիստը գտնելու Երուսաղէմի մէջ: Շատեր զոհ գացին համաճարակներու, ուրիշներ, որպէս վանական, իրենց ամբողջ կեանքը նուիրեցին Ս. Տեղեաց ծառայութեան: Յուզիչ տողանցք մըն էր Աստուծոյ համեստ սպասաւորներու եւ նուիրեալներու նախընտրանքը մեռնիլ յԵրուսաղէմ:*

*Մարիա Վալսթէն, նախկին տնօրէնուհին Շուէտական ուսումնասիրական կեդրոնի, զեկուցեց շուէտացի ուղեգիրներու մասին եւ անոնց հանդիպումները հայոց հետ Ս. Երկրին մէջ: Տօքթ. Վալսթէն ընտրած էր վեց Շուէտացի ուղեգիրներ, որոնց մեծամասնութիւնը կը նկարագրեն լուսաւորեայի արարողութիւնը, եւ իբր բողոքական՝ անոնք քիչ մը շփոթած են արեւելեան ծիսակատարութիւններէն: Ամէնէն հետաքրքրական դէմքը՝ Ֆրետերիք Հասելքուիսթն է (1750-ի մօտերը), որ սիրելի աշակերտն էր Լինէոսի: Հասելքուիթ մօտ երկու տարի ճամբոր-*

Շար.ը էջ 16




Թէքէեան Մշակութային Միութեան
Լոս Անճելըսի մասնաճիւղը
Սիրով կը հրաւիրէ Ձեզ
ՍՏԵՓԱՆ ԱԼԱՋԱՋԵԱՆԻ
ՎԵՐՋԻՆ ՀՈՒՆՁՔԻ (2005-2009)
Ներկայացումին
Զեկուցողներ՝
ԳԷՈՐԳ ՔՐԻՍՏԻՆԵԱՆ - «Պատմուածքներ»
ՀՐԱՉ ՍԵՓԵԹՃԵԱՆ - «Հայ Մամուլի Էջերում»
ՍԱՐԳԻՍ ՄԱՀՍԵՐԷՃԵԱՆ - «Յորձանուտը»
Հանդիսավար՝
ՎԱՉԷ ՍԵՄԵՐՃԵԱՆ
ՈՒՐԲԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 5, 2010
Երեկոյեան ժամը 8:00-ին
ԳԼԵՆՏԵՅԼԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
222 E. Harvard Avenue - Glendale
Validated parking at Marketplace parking structure
Harvard & Maryland
ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

# ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՅՈՒԼԻՍ 6, 7, 2010

*Շարունակուած էջ 15-էն*

*դեց արեւելքի մէջ, յատկապէս Փոքր Ասիա՝ հաւաքելու բոյսերու նմուշներ: Իր ուղեւորութեան ընթացքին հանդիպեցաւ Երուսաղէմի Հայոց Պատրիարք Յակոբ Արք. Նալեանին՝ Պոլսոյ մէջ, նոյնպէս՝ Երուսաղէմ: Հասելքուիթ շատ ջերմ զգացումներ ունէր Հայոց նկատմամբ եւ կ'ընէ քանի մը հետքրքրական նշմարներ: Հասլեքուիթ կ'որակէ Հայերը որպէս Թուրքիոյ գլխաւոր ճարտարապետները՝ ըսելով, որ Հայերը յատուկ յակում ունին այս արուեստի նկատմամբ: Հասլեքուիթ մեծ գովաբանութեամբ կը նկարագրէ Հայոց Պատրիաքը եւ կարօտով կ'անդրադառնայ իր բնակութեան մասին՝ Հայոց Վանքին մէջ:*

*Երեքշաբթի օրուան նիստը լի էր յայտնութիւններով: Տօքթ. Խատէր Սալամէ, Ալ Աքսա տաճարին գրադարանի տնօրէն, թուրկեց ականաւոր Հայերու անուններ, որ կարեւոր դեր խաղցած են Երուսաղէմի հասարակական կեանքի մէջ 19-րդ դարուն, իբր երկրաչափներ, ճարտարապետներ, ջրաբաշխման մասնագէտներ եւ վարչական պաշտօնեաներ: Այս Հայ պաշտօնեաները մեծ դեր խաղցան բարւոքելու Երուսաղէմի առօրեայ պայմանները 19-րդ դարուն: Տօքթ. Սալամէ նաեւ յիշեց, որ Հայերը աչքառու էին արհեստներու մէջ եւ նպաստեցին քաղաքաշինութեան:*

*Փրոֆ. Բէն Արիէ, Եբրայական Համալսարանի նախկին ռէքթօր, մանրամասն նկարագրեց, թէ ինչպէս հաստատուեցաւ Պաղեստինի 19-րդ դարու ուսումնասիրութեան դաշտը: Ան յիշեց, որ հարկաւոր եղած է ընթերցել 5 000 ուղեգիրներու հատորներ, որպէսզի կրնայ ուսումնասիրել Երուսաղէմի առօրեան: Բրոֆ. Պէն Արիէ գնայատանքով յիշեց Հայոց դերը տպագրութեան եւ լուսանկարչութեան մէջ: Ան շեշտեց, որ հայերը հանդիսացան ռահվիրաները այդ մարզերու մէջ: Փրոֆ. Բէն Արիէն յիշեց, որ ուղեգիրներու մեծամասնութիւնը շատ դրական գնահատանք ունին Հայոց մասին:*

*Պարոն Տէյվիտ Քրօյանքէր, ճարտարապետութեան հանրածանօթ պատմաբան եւ մեծ ախոյեան յուշարձաններու պահպանման, յիշեց Հայոց դերը քաղաքաշինութեան մէջ: Մեծ հիացումով խօսեցաւ Յովհաննէս Պատրիարք Զմիւռնացիի մասին, որուն կոչեց տեսիլքի տէր անձնաւորութիւն: Պարոն Քրօյանքէր Յովհաննէս Պատրիարքը որակեց ռահվիրաններէն մէկը, որ առաջիններէն եղաւ գնելու հողամսեր քաղաքի պարիսպներէն դուրս: Միայն չորս տասնամեակ յետոյ Հայոց Պատրիարքարանը կարողացաւ կառուցել հաստութաբեր շէնքեր: Քրօյանքէր աւելցուց, որ Յովհաննէս Պատրիարք Հայոց Պատրիարքարանի տնտեսութիւնը դրաւ կայուն հիմերու վրայ: Ի տարբերութիւն հին շրջաններէն հիմնուած մնացած տնտեսութիւնը հիմնուած էր ուխտաւորներու եւ փոփոխական թուանշաններու վրայ, որ ենթակայ էին քաղաքական վերիվայրումներու: Չորեքշաբթի, 7 Յուլիս, աւելի յստակ սահմանուած նիւթեր շօշափուեցան:*

*Տօքթ. Հէրպէրթ Մավրէր, Վիէննայէն հանրածանօթ գրող մը, որ սահուն գրաբար եւ աշխարհաբար կը խօսի, զեկուցեց, "Հայրեր իբր ռահվիրաներ արեւելքի մէջ Աւստրիական հաստատութիւններու ծառայութեան մէջ": Տօքթ. Հէրպէրթ, որ երեք տասնամեակներէ ի վեր կ'ուսումնասիրէ Հայ-Աւստրիական յարաբերութիւնները նշեց, որ հայեր բարձր դիրքեր գրաւեցին շնորհիւ իրենց լեզուական կարողութիւններուն եւ իրենց մշակութային յատկութիւններուն եւ մակարդակին: Հայերը լաւ դիրքեր կը զբաղեցնէին մասնաւորաբար Աւստրիական ծովային եւ նամակագրական հաստատութիւններու մէջ: Տօքթ. Հէրպէրթ աւելցուց, որ Հայրեը կարեւոր ծառայութիւններ մատուցեցին դիւանագիտական ծիրէն ներս: Տօքթ. Մավրէր բացատրեց, որ այս յարաբերութիւնը զարգացաւ եւ խորացաւ երեք հարիւր տարուայ ընթացքին եւ դրուած էր ամուր հիմքերու վրայ, որ յետոյ վերածուեցաւ մնայուն յարաբերութեան մը: Տօքթ. Մավրէր յիշեց շատ մը հայ պաշտօնակատարներու անուններ, որոնք եղած են Աւստրիոյ Եաֆայի եւ Երուսաղէմի հիւպատոսարաններու մէջ: Պր. Մավրէր թելադրեց յաւելեալ արխիւային ուսումնասիրութիւններ այս մարզին մէջ:*

*Մարի Պաղպուտարեան-Հանանիա ներկայացուց Տիգրան Սաւալանեանցի կենսագրութիւնը, որպէս 19-րդ դարու Երուսաղէմի տիրական անձնաւորութիւններէն մին: Տօքթ. Պաղպուտարեան, որ կ'ուսուցանէ գերմանական համալսարաններու մէջ, կեդրոնացաւ Սաւալանեանցի ամենակարեւոր իրագործումին վրայ: Իր համապարփակ 1200 էջնոց հատորը՝ «Ժամանակագրական Պատմութիւն Երուսաղէմի»: Տիկին Մարի հարց տուաւ. «Նկատի առնելով սիսթեմաթիք արխիւի եւ արդիական գրադարաններու չգոյութիւնը, ինչպէս Սաւալանեանց յաջողեցաւ գլուխ հանել նման վիթխարի եւ քննական հատոր մը»: Տօքթ. Մարի աւելցուց իր Երուսաղէմ կարճ կեցութեան շրջանին (12 տարի) կրցաւ ցուցակագրել 1700 ձեռագրեր, վերակազմակերպել տպարանը եւ հրատարակել տասը հին բնագրեր եւ նաեւ կատարել քարտուղարական եւ արխիւային աշխատանքներ: Տօքթ. Մարի Պաղպուտարեան ցաւ յայտնեց, որ Տիգրան Սաւալանեանց կը մնայ անծանօթ հերոսներէն մէկը: Տիկին Մարի թելադրեց մանրամասն կենսագրութիւն մը պատրաստել Սաւալնեանցի մասին, որ ծառայէ իբր տիպար նուիրումի եւ անձնուրացութեան ապագայ սերունդներուն համար:*

*Համագումարի կարեւոր յայտարարութիւններէն մէկն էր՝ զեկոյցներ հայ լուսանկարչութեան պատմութեան շուրջ: Այս նիստը կեդրոնացաւ հայ նկարչութեան երկու սիւներուն շուրջ, մէկը, որ կ'ապրէր Երուսաղէմ եւ միւսը՝ Պոլիս: Որոնք մշտական կապի մէջ էին, փոխանակելով նամակներ եւ թէքնիք տեղեկութիւններ գաղտնապահութեան պայմանով: Երկու զեկոյցներու հեղինակները մասնագէտներէն են լուսանկարչութեան պատմութեան մէջ:*

*Ռութ Համէլ, որ կը դասաւանդէ Վաշինկթոն, հետաքրքրական զեկոյց մը ներկայացուց Եսայի Պատրիարքի լուսանկարչական վաստակի շուրջ անձնաւորութիւն մը, որ այսօր Պաղեսինի մէջ կը դասուի լուսանկարչութեան ռահվիրայ (pioneer): Տիկին Համէլ խորացաւ Եսայի Պատրիարքի լուսանկարչական ասպարէզի մասին, եւ յիշեց իր յատուկ կապերը եւ մասնաւորաբար իր ջանքերը ստեղծելու լուսանկարչական դպրոց մը: Տիկին Համէլ յայտնեց, որ իր ուսումնասիրութիւններու ընթացքին գտած է Եսայիի մօտ ուսանած տասը աշակերտներու, որոնք հասած են մեծ յաջողութիւններու իրենց ասպարէզին մէջ: Յետոյ նկարագրեց պարունակութիւնը չորս տետրակներու խմբագրուած Եսայի Պատրիարքի կողմէ, որ կը գտնուին ձեռագրատան մէջ, որոնք ուղեցոյցներ են սկսնակ լուսանկարիչներու համար: Ռութ Համէլ ներկայացուց 19-րդ դարու ժամանակակից քանի մը նկարագրողներ, որոնք այցելած են իր աշխատատեղին եւ հանդիպած Եսայի Պատրիարքին: Զուգադիպաբար նոյն ժամանակամիջոցին (1855-ին), երկու եղբայրներ Ապտուլլահեան մականունով կը վարէին լուսանկարչական աշխատանոց մը Պոլսոյ մէջ: Գաթէրին Բիկուէ, որ երկարաշունչ արխիւային ուսումնասիրութիւններ կատարած է Պոլիս, Գահիրէ եւ Փարիզ, շատ ընդարձակ կենսագրական մը ներկայացուց երկու եղբայրներու վաստակին շուրջ: Յետագային Ապտուլլահեանները հանդիսացան Միջին Արեւելքի ամէնէն նշանաւոր լուսանկարիչները: Պոլսոյ մէջ նկարեցին աւագանին եւ ականաւոր այցլուները. եւ կարճ ժամանակէն եղան Սուլթանի պալատի լուսանկարիչները: Ապտուլլահեան եղբայրները մարզեցին լուսանկարիչներու ամբողջ սրունդ մը եւ տարածեցին Օսմանեան կայսրութեան մէջ այս նոր արուեստի բարիքները: Գաթէրին Բինկուէ արեւելագէտ է եւ արդէն ամբողջացուցած է գիրք մը Ապտուլլահ եղբայրներու մասին: Այս նիստին երրորդ զեկուցողն էր Ահմէտ Մուրուվադ, որ ունի հսկայական լուսանկարչական արխիւ մը Սուրբ Երկրի մասին: Պր. Մուրավադ խօսեցաւ առաջին կին ռահվիրայ՝ Գարիմա Ապուտի մասին: Տիկին Ապուտ ծնած էր Նազարէթ, առաջին համաշխարհային պատերազմէն առաջ: Գործած է 20-րդ դարու առաջին տասնամեակներու ընթացքին (դարու առաջին կիսուն): Գարիմա Ապուտ ուսանած է Հայֆայի մէջ՝ հայ նկարիչի մը մօտ եւ անկէ յետոյ ունեցած է իր սեփական գործատեղին: Տիկին Ապուտ կը յաճախէր բնակարաններ եւ կը լուսանկարէր: Նկատի առնելով, որ իգական սեռը կը խուսափէր շուկայ իջնելէ, Գարիմա կը հրաւիրուէր լուսանկարելու ընտանեկան յարկերէն ներս, ինչպէս հարսանիքներ եւ այլն: Քարիմա այցելած է Պաղեստինի շատ վայրեր եւ լուսանկարած է գիւղական կեանքը եւ յուշարձաններ: Յաճախ կ'այցելէր Անդր-Յորդանան եւ կը լուսանկարէր հագուագիւտ տեսարաններ: Տիկին Ապուտի արխիւը ընդարձակ է եւ հանք մըն է ընկերային գիտելիքներու: Գարիմա կանուխ կնքեց իր մահկանացուն եւ թաղուած է Բեթղեհէմի լուդերական գերեզմանատան մէջ:*

*Վերջին նիստը կը պարունակէր այլազան զեկոյցներ:*

*Կիլ Կորտօն, Երուսաղէմացի ծանօթ ճարտարապետ եւ պատմաբան մը, զեկուցեց հայ որբերու՝ Երուսաղէմի Լուտվիկ Շնէլլըր գերմանական որբանոցի ժամանումը 1896-ին: Նկարագրեց, թէ ինչպէս Լուտվիկ Շնէլլըր պայքարեցաւ իր կեդրոնական վարչութեան առարկութիւններու դէմ, բայց իր մահուան մահիճին մէջ էր, երբ յանկարծ լուրը ստացաւ Գերմանիայէն, որ իր կեդրոնական վարչութիւնը վերջապէս ընդունած էր առաջարկը: Այս որբերը, որ մեծամասնաբար կուգային Մարաշէն եւ Տիգրանակերտէն, ժամանակի ընթացքին ձեռք ձգեցին արհեստներու եւ ապագային քաղաքին ծանօթ վարպետներ եւ արուեստագէտներ դարձան՝ պատիւ բերելով հայ համայնքին:*

*Նուրիդ Քէնան, Թէլ Ավիվի համալսարանի արուեստի պատմութեան պետը եւ հեղինակ, «Երուսաղէմի արդի հայ յախճապակին", հետաքրքիր զեկոյց մը ներկայացուց, "19-րդ դարու սրբանկարները Երուսաղէմի հայ եկեղեցիներու մէջ»: Փրոֆ. Քէնան կեդրոնացաւ տասը սրբանկարներու վրայ եւ խօսեցաւ Սեբաստիոյ 40 մանկանց աւանդութեան թեմայի եւ անոր տարբերակներու մասին: Ան խօսեցաւ իւրայատուկ իքօնակրաֆայի մը մասին եւ շեշտեց որոշ թեմատիկ գծեր: Տօքթ. Քէնան ըսաւ, թէ իր զեկոյցը նախնական եւ փորձառական է եւ ան մտադիր է գրել աւել ընդարձակ գիրք մը Երուսաղէմի հայկական սրբանկարներու մասին, իրենց սպառիչ պատասխաններով:*

*Տօքթ. Ալպէրթ Աղազարեան, Պաղեստինի ծանօթ պատմաբաններէն, խօսեցաւ Նափոլիոն Բոնապարտի եւ Մուհամմէտ Ալիի դէպի Պաղեստին զինուորական արշաւանքներու մասին: Ան պատկերաւոր ձեւով նկարագրեց Նափոլէոնի զինուորները եւ իրենց վայրագ կենցաղը Պաղեստինի մէջ: Տօքթ. Աղազարեան մանրամասն նկարագրեց Նափոլէոնի կեցութիւնը Յոպպէի մէջ եւ յատկապէս Հայոց վանքին մէջ, ուր իր զինուորները կը մահանային ժանտախտէ: Առ ի երախտագիտութիւն հայ վանականներու հիւրասիրութեան եւ ազնիւ վերաբերմունքին՝ Նափոլէոն նուիրեց իր վրանը, որ ընտիր ձեռագործուած էր, հիմա կը գործածուի իբր շուրջառ Ս. Յակոբեանց Տաճարին մէջ: Մուհամմէտ Ալի շատ հայ խորհրդականներ ունէր Եգիպտոսի մէջ: 1830-ի եւ 1840-ի միջեւ, Եգիպտոս եւ Պաղեստին վերածուեցան մէկ երկրի եւ մէկ համայնքի: Հայոց Պատրիարքութիւնը օգուտ քաղեց ձեռք ձգելով շինութեան արտօնագրեր՝ Մուհամմէտ Ալիի շրջանին: Տօքթ. Աղազարեան յայտնեց, թէ Հայոց վերաբերեալ բաւական հում նիւթ գտած է արխիւներու մէջ եւ թելադրեց ատոնց մէջ խորանալ:*

*Համագումարի եզրափակիչ ընթրիքը կայացաւ Երուսաղէմի յայտնի պանդոկի մը մէջ:*

*Նուրհան Սրբազան մեծ գոհունակութեամբ նշեց, որ բոլոր նիստերու ընթացքին ներկաները մեծ հետաքրքրութեամբ հետեւեցան դասախօսութիւններուն եւ համագումարը նկատեց յաջող բոլոր տեսանկիւններէ:*

*Նուրհան Սրբազան պատուեց Տիկին Պուճիգանեանը՝ յախճապակիէ պնակ մը նուիրելով, առ ի գնահատանք իր հայագիտութեան մատուցած ծառայութիւններուն համար: Նմանապէս երկու արուեստի գործերով պատուեց Աստղիկ Զամքէրթէնին եւ Զաւէն Եկաւեանին, իրենց մշտական հովանաւորութեան համար: Յատուկ շնորհակալութեան խօսք ունէր Ս. Սարգիս փօնտին եւ Պարոն Մարթին Եսայեանին: Նուրհան Արք. լոյս յայտնեց, որ այսպիսի համագումարները պիտի շարունակէն նոյն կորովով եւ եռանդով:*

## ՀԱՄԵՄՈՒՆՔՆԵՐ ԵՒ ԴԵՂԱԲՈՅՍԵՐ

*ԹԱՐԽՈՒՆ: Ամենալաւը Թարմ Թարխունն է: Այն օգտակար է ատամների համար, օգնում է բոլոր տեսակի չարորակ խոցերի դէպքում: Թարխունն ամրացնում է ստամոքսը, վերացնում բերանի տհաճ հոտը:*

*Ժանտախտի համաճարակի ժամանակ Թարխունի հիւթ խմելը կը պահպանի հիւանդութիւնից:*

*ԱՆԱՆՈՒԽ (ԴԱՂՁ): Ամէնից օգտակարը նօսր տերեւներով անանուխն է: Այն փափկացնող յատկութիւն ունի: Օգնում է խոցերի, ականջներում աղմուկի դէպքում:*

*Բերանից վերացնում է սոխի եւ սխտորի հոտը: Օգնում է դժուար չնչառութեան եւ կրծքի ցաւի դէպքում: Տարրալուծում է սեւ մաղձը, բուժում է դեղնախտը, ջրգողութիւնը:*

*Անանուխը զսպում է սեռական ցանկութիւնը եւ քրտնեցնում:*

*Եթէ անանուխի Թուրմով շփէք մարմինը, ապա կարող էք բուժել էկզեման եւ քորը: Չափաբաժինը՝ 4,4 գրամ: Սակայն անանուխը վնասակար է երիկամների համար: Նրա վնասակար յատկանիշները վերացնում է մատատուկի հիւթը:*

*ՔԱՑԱԽ: Ամենալաւը գինու քացախն է: Այն օգնում է գլխացաւերի դէպքում: Հեռացնում է մազերի Թեփը, նպաստում մարսողութեանը, ամրացնում ստամոքսը: Այն մեծացնում է սեռական ցանկութիւնը, դադարեցնում լորձի արտադրութիւնը, օգնում է ջրգողութեան ժամանակ: Քացախը կոտրում է նաեւ ծարաւը: Սակայն մեծ քանակով օգտագործելու դէպքում այն հիւծում է օրգանիզմը: Քացախի վնասակար յատկանիշները վերացնում է մեղրը:*

*Քացախին կարող է փոխարինել խակ խաղողի հիւթը:*

*ՀԱՄԵՄ: Ամենաօգտակարը բանջարանոցային համեմն է՝ դեղին ծաղիկներով: Այն հանգստացնում է մարդուն, ունի նաեւ քնաբեր յատկութիւն: Օգնում է գլխացաւերի, ինչպէս նաեւ ականջացաւի դէպքում: Կրծքով կերակրող մայրերին խորհուրդ է տրւում համեմ ուտել, քանի որ այն աւելացնում է կաթը: Համեմն օգտակար է նաեւ մէջքացաւերի դէմ, փափկացնում է կարծր ուռուցքները:*

*Սակայն այն վնասակար է աչքերի համար: Համեմին կարող է փոխարինել երիցուկը: Մի Թեթեւ խաշած համեմը դրէք դուրս եկած Թութքի վրայ. դա կը հանգստացնի եւ կը Թեթեւացնի ցաւերը: Չափաբաժինը՝ 14,7 գրամ:*

*ՔՐՄՈՆ ՍՈՎՈՐԱԿԱՆ: Օգտակար է սրտխփոցի, մրսածութեան ժամանակ: Ամէնից լաւ ազդում է ստամոքսի վրայ: Վերացնում է կլոր եւ տափակ ճիճուները: Քրմոնի չափից դուրս շատ գործածութիւնը չորացնում է օրգանիզմը: Չափաբաժինը՝ 5,88 գրամ: Նրան կարող են փոխարինել անիսոնն ու ֆենխելի սերմերը:*

*ԱՆԻՍՈՆ: Անիսոնի գոլորշիները օգնում են գլխացաւերի դէպքում, մաքրում Թոքերը աւելորդ խոնաւութիւնից, բուժում հազը: Անիսոնը լուծում է սեւ մաղձը եւ դուրս հանում օրգանիզմից:*

*Այն բացում է լեարդի, փայծաղի եւ երիկամների խցանումները, նպաստում դաշտանի նորմալացմանը: Անիսոնը վերացնում է Թունաւոր նիւԹերի վտանգաւոր ազդեցութիւնը, ունի քրտնաբեր յատկութիւն: Չափաբաժինը՝ 2,94 գրամ: Սակայն անիսոնը վնասակար է միզապարկի համար: Նրա վնասակար յատկութիւնները վերացնում է մատատուկի օշարակը: Անիսոնի հիւԹով կարելի է ողողել ատամները:*

*ՄԱՆԱՆԵԽ: Ամենաօգտակարը Թարմ մանանեխն է: Այն օգնում է կաԹուածի ժամանակ, վերացնում ոտքերի եւ ձեռքերի դողը, վերացնում կոկորդում լորձի հաւաքուելը, լաւացնում է դէմքի գոյնը: Մանանեխը սպանում է մեծ ու մանր ճիճուներին, դաշտանը դարձնում է առատ, մեծացնում սեռական պոտենցիան: Այն նպաստում է նաեւ մարսողութեանը, բացում է արգանդի խցանումները: Մանանեխի իւղը օգնում է նստանեարդի հիւանդութեան, մկնատամի, նաեւ էկզեմայի դէպքում: Չափաբաժինը՝ 1,47 գրամ: Սակայն այն վնասակար է ուղեղի համար: Նրա վնասակար յատկութիւնները վերացնում է քացախը:*

*ԾՈՎԱԲՈՂԿԸ օրգանիզմը մաքրում է լորձից, բացում խցանումները, լաւացնում աղեստամոքսային տրակտի աշխատանքը, լաւացնում ախորժակը: Ծովաբողկն օգտակար է ցածր ԹԹուայնութեան, լեղապարկի հիւանդութեան դէպքում: Այն հիանալի միզամուղ է, այն օգտագործում են ջրգողութեան, միզապարկի քարերի, ռեւմատիզմի ժամանակ: Ծովաբողկն օգտակար է նաեւ սիրտ-անօԹային հիւանդութիւնների՝ ստենոկարդիայի եւ իշեմիայի դէպքում: Դրա համար 1 Թէյի գդալ քերած Թարմ ծովաբողկին աւելացնում են այնքան մեղր, որ խառնուրդը կազմի 1 ճաշի գդալ: Այս խառնուրդն ուտում են սոված փորին, նախաճաշից մէկ ժամ առաջ: Կուրսը 30 օր է: Տհաճ զգացողութեան դէպքում ծովաբողկի քանակը քչացնել, ապա աստիճանաբար կրկին հասցնել 1 Թէյի գդալի: Բուժումը կարելի է կրկնել 21 ամսից ոչ շուտ:*

*Բուժման ընԹացքում չի կարելի ծխել, խմել եւ գերլարուել:*

*Խորհուրդ է տրւում 5-6 կուրս՝ 3 տարուայ ընԹացքում: Ծովաբողկը նաեւ հզօր հակաբորբոքային յատկութիւններ ունի: Անգամ մի փոքրիկ կտոր եԹէ դնէք ԹԹուների, մարինադի մէջ, ապա դրանք չեն փչանայ: Ծովաբողկի սուր համը կոտրելու համար այն խառնում են ընկոյզի, կիտրոնի հիւԹի, քերած հում բողկի հետ:*

*Ահա օրգանիզմը լորձից մաքրելու հիանալի միջոց. 150 գ քերած ծովաբողկին խառնել 2-3 կիտրոնի հիւԹ, խառնուրդն ընդունել օրը 2 անգամ՝ սոված փորին, կեսական Թէյի գդալ: Սկզբում ծովաբողկը կարող է արցունք առաջացնել, գլխում տհաճ զգացողութիւններ, սակայն, եԹէ խառնուրդը մի քանի օր ընդունելուց յետոյ այդ զգացողութիւնն անցնի, ուրեմն օրգանիզմն ազատուել է լորձից:*

*Դրանից յետոյ ուտելուց առաջ խմել գազարի Թարմ հիւԹ:*

## ՓԱՆՈ՞Ս, ԹԷ՝ ՓԱՐՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

*Շարունակուած էջ 14-էն*

*(Նրա բառերով ասած) դեռ քանդում-աւերում է արարչի ստեղծած աշխարհը.*

Հազար անէծք, Թեզ, ով մարդ աւերիչ,
Ջինջ ջրերը՝ դու դարձրիր ճահիճ,
Քո անզօր ձեռքով, Թունաւոր շնչով
Դու կոյս բնութեան դահիճը դարար:
(էջ 126)

*Բանաստեղծի քաղաքացիական սրտացաւութիւնը ոչ միայն հայրենիքի համար է ըմբոստանում, այլեւ՝ համայն աշխարհի... հիմնականում «Նշենի» գրքին ձօնուած ողջոյններով է փակւում «Կռունկ» ժողովածուն, սակայն ճշմարիտ, սրտացաւ, հայեցի ընԹերցողի համար Փանոս Վարդանեան բարեգութ, ժրաջան, շնորհաշատ բանաստեղծի ստեղծագործութիւնները միշտ բաց են ու գրասեղաններին դրուած: Այս գաղափարն արդէն վկայակոչւում է նրա չորրորդ հոգեմատեանը՝ Յուշեր կեանքիս էջերից» (Երեւան, 2009 Թ.): Խոժոռադէմ հեղինակի լուսանկարն է կազմի վրայ՝ մի փունջ վարդերի, աշխարհի քաղաքական-տարածքային քարտէզի Թիկունքային հարեւանութեամբ: Աւել է, Թէ կարող էին ֆոն ծառայել նաեւ բահը, ծառը, պատը, գետը, ինքնաշարժը, Արարատը..., բայց ոչ, դպրութեան մի մասնիկն է լուսանկարում «խօսուն լռութեամբ» համրացել, կոտրել ու մեղմել հեղինակի կապ հանգոյց փողկապի չոր հանդիսաւորութիւնը... Ես որոշեցի հերԹական գրքի «դուրսը» նկարագրել, որ ընԹերցողն էլ չունչ քաշի: 240 էջերի վրայ դրոշմուել են նրա չափածոյ եւ արձակ ստեղծագործութիւնները, Թարգմանութիւնները, ճանաչողների կարծիքները, Երեւանեան տուն-Թանգարանների «գոհաբերած» պատուոգրերը եւ այլն... Ապրելով Թեհրանում, բանաստեղծը հաւասար ճանաչելի է Թէ՛ հայրենիքի գրասէր հասարակութեանը եւ Թէ՛ Լոս Անճելոսի հայերէն լրագրերի ու շաբաԹաԹերԹերի բազմաԹիւ ընԹերցողներին: Այստեղ գաղտնիք չկայ: Աշխատասիրութիւնն ու գրական շնորհքն են բացել բոլոր հոգու դռները: Նրա մարդասիրութիւնն ընդունելի է ամենուրեք.*

Սէրս մի քանտիր... (էջ 59)

*Իսկ հայրենասիրութիւնը չի վիճարկւում, շիտակ է, Թարմ ու ինքնատիպ.*

...Ձեռքերս եմ բացում
Ու տեսնում եմ ափերիս մէջ
Ծովից մինչեւ ծով քարտէզը մեր՝
Ծուատուած է ու սրատուած...
(էջ 13)

*Առանձին քաջալերանքի են արժանի Փանոս Վարդանեանի արձակ էջերն ու Թարգմանութիւնները: Վերջինները բնագրի հետ չենք կարող համեմատել, քանզի պարսկերէն չգիտենք: Իմացողից էլ չհարցրեցինք, մէկ այլ արատաւոր բան մէջտեղ չգար: Մնացինք մեր ու բանաստեղծի խղճի հետ: Հայերէնը բաւական սահուն է: Պիտի ասել, որ սեփական արձակ էջերից որակով առանձնանալու եւ պատմուածք կոչուելու յայտ ունեն «Բժիշկը», «Հայուհին», «Պառաւի գդալները»...*

*Գեղարուեստական ակնարկի ձիրքը պարզապէս զգացնել է տալիս: Բանաստեղծն ունի նաեւ արձակագրի հոտառութիւն, նրբերանգներ որսալու կարողութիւն: Իսկ հոգուն ու ոգուն հարազատացած չափածոյ տնանքի մասին մեր նոյնքան համեստաշունչ տպաւորութիւնները կ'ուզենք աւարտել այս լուսաւոր հեղինակի հետեւեալ համամարդկային, յաւիտենական տագնապ-հարցադրումով.*

...Գետինը խուլ է, երկինքը՝ կոյր,
Մեռնել չեմ ուզում, ումի՞ն պիտ ասեմ: (էջ 216)

*Այո, յիրաւի, բանաստեղծներին մահը չի կարող մօտենալ, որովհետեւ նրանք Աստծոյ զաւակներն են եւ պարուրուած են անձեռնմխելի անմահութեամբ:*

## ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՇԷՆՔ

*Շարունակուած էջ 1-էն*

*մը ուր հինգ տարիներ վարչութիւնն ու ենԹայանձնախումբերը գումարեցին իրենց ժողովներն ու կատարեցին գրասենեակային աշխատանքները Միութեան շէնքի շինարարութեան ընԹացքին:*

*Յաջորդ պատգամախօսն էր Միութեան փոխ-ատենապետ Իրաւաբան Ժոզէֆ Մինասեան որ իր ուրախութիւնը յայտնեց երազի մը իրականութիւն դառնալու տօնախմբութիւնը տեսնելու, հակառակ շատ մը դժուարութիւններու որոնց հանդիպեցանք բոլորս: Ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր նուիրատուներուն, ատենապետի պաշտօն ստանձնող անձերուն եւ վարչական անդամներուն: Խօսք առաւ նաեւ Փրոֆ. Օշին Քէշիշեան: Ան իր անկեղծ շնորհաւորութիւնները յայտնեց Պոլսահայ Միութեան կեդրոնին բացման առԹիւ, մաղԹելով յաջողութիւն:*

*Հանդիսավարը հրաւիրեց Հայաստանի պետական օփերայի մեներգիչ Անդրանիկ Մովսէսեանը որ մեներգեց «Սեւ Աչեր», «Ձայն մը Հնչեց Էրզրումի Հայոց Լեռներէն», «ՍանԹա Լուչիա»ն եւ այլ երգեր դաշնամուրի ընկերակցութեամբ Յովիկ Ոսկանեանի:*

*Բեմ հրաւիրուեցաւ Հայաստանի Հանրապետութեան Հիւպատոս Գրիգոր Յովհաննիսեանը որ շեշտեց Թէ այս կեդրոնը պէտք է ներկայացնէ ոչ միայն Պոլսահայ մշակոյԹը, այլ բոլոր հայկական մշակոյԹը: Խօսք առաւ նաեւ Միութեան բացման Յանձնախումբի անդամներէն տիար Գուրգէն Պէրքչանլար: Ան ներկայացուց Միութեան հակիրճ պատմութիւնը սկսելով առաջին ատենապետներէն մինչեւ ներկայ ատենապետ Սիմոն Աճիլաչօղլուն, որոնց յանձնուեցան յուշանուէրներ ձեռամբ Տիկնանց եւ Ընկերային Ձեռնարկներու Յանձնախումբի ատենապետուհի՝ Թալին Սարաֆօղլուի, Տիգրան Գուրեանի եւ բացման կարգադիր յանձնախումբի անդամ Գուրգէն Պէրքչանլարի:*

*Յայտագրին վերջին բաժնով հրաւիրուեցաւ Գերշ. Սրբազան Հայրը որ իր պատգամին մէջ շնորհաւորեց եւ քաջալերեց որ այս նորակառոյց շէնքը միայն շէնք չմնայ այլ դառնայ լոյսի փարոս ապագայ սերունդներուն:*

*Նուիրատու անդամներ Պոլսահայ Միութեան հանդէպ իրենց ունեցած սիրոյն ու նուիրումի զօրութենէն մղուած՝ կատարեցին սրտաբուխ նուիրատուութիւններ: Ճաշկերոյթը լրիւ յաջողութիւն մըն էր զոր փաստեց Պոլսահայոց ուժեղ ներկայութիւնը Լոս Անճելըսի մէջ:*

## ՀԱՅԱՍՏԱՆ-ՍԼՈՎԱԿԻԱ՝ 3:1.
### ԳԵՂԵՑԻԿ ՅԱՂԹԱՆԱԿ ԽՄԲԻ ԱՌԱՋԱՏԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ



*Վազգէն Սարգսեանի անուան «Հանրապետական» մարզադաշտում Հայաստանի հաւաքականը հիւրընկալել էր Սլովակիայի հաւաքականին:*

*Խաղն աւարտուեց 3:1՝ յօգուտ Հայաստանի: Սլովակիայի դարպասը գրաւեցին Եուրա Մովսիսեանը, Գէորգ Ղազարեանը, Հենրիխ Մխիթարեանը: Իսկ հիւրերից կոլ խփեց Ռադոսլավ Զաբավնիկը:*

*«Հանրապետական» մարզադաշտին յարակից փողոցներում խաղից յետոյ լսւում էին երկրպագուների՝ Հայաստան, Հայաստան վանկարկումները:*

*Աշխարհի առաջնութեան մասնակից Սլովակիայի հաւաքականը երեւանեան խաղից առաջ ունէր հարիւր տոկոսանոց արդիւնք՝ 6 միաւոր երկու խաղում եւ զբաղեցնում էր երկրորդ տեղը: 6 միաւոր ունի նաեւ խմբի առաջատար Իռլանդան:*

*Սլովակիայի հաւաքականը Վլադիմիր Վայսի գլխաւորութեամբ աշխարհի առաջնութեան մասնակցի խաղ չցուցադրեց եւ արդէն 23-րդ րոպէին գնդակ բաց թողեց: Գերազանց հարուածով աչքի ընկաւ Եուրա Մովսիսեանը: Առաջին խաղակէսում սլովակները հաւասարեցրին հաշիւը գլխաւոր մարզչի որդու՝ Վլադիմիր Վայսի գոլի շնորհիւ:*

*Երկրորդ խաղակէսում Հայաստանի հաւաքականը շարունակեց խաղալ յարձակողական ոճով եւ շատ արագ յաջողութեան հասաւ: 50-րդ րոպէին Գէորգ Ղազարեանն առաջ մղեց Հայաստանի հաւաքականին: Հանդիպման նախավերջին րոպէին իր գնդակը խփեց Հենրիխ Մխիթարեանը, որ տուգանային հրապարակի գծից հուժկու հարուածով ոչ մի առիթ չտուեց դարպասապահ Մուխային: Հայաստանի հաւաքականն առաջին յաղթանակը տարաւ Եվրօ-2012-ի ընտրական մրցաշարում եւ 4 միաւորով բարձրացաւ երրորդ տեղ:*

*Հետխաղեայ մամուլի ասուլիսին Հայաստանի հաւաքականի մարզիչ Վարդան Մինասեանին դահլիճում դիմաւորեցին ծափահարութիւններով:*

*«Չեմ ցանկանում երկար խօսել: Ցամենայն դէպս արդիւնքը համապատասխանում էր խաղին: Ամէն ինչի հիմքում ընկած է լաւ խաղը: Եթէ լաւ խաղ չլինի, ապա արդիւնք եւս չի կարող լինի:*

*Մրցաշարային աղիւսակից խօսել չէի ցանկանայ: Ես հեռուն չեմ գնում: Իհարկէ, որքան լաւ ենք խաղում, այնքան մեծանում է բարձր տեղում յայտնուելու հաւանականութիւնը:*

*Հրայր Մկոյեանի Արարատ Առաքելեանի փոխարէն հիմնական կազմում յայտնուելը պայմանաւորուած էր նրանով, որ սլովակներն ի տարբերութիւն Իռլանդայի աւելի ցածրից են գործում: Արարատ Առաքելեանը լաւ է խաղում 2-րդ յարկում, իսկ ներքեւում աւելի յուսալի է Մկոյեանը:*

*Մարզիչը նշեց, որ ընդմիջմանը տղաներին հաւաստիացրել էր, որ 2-րդ խաղակէսում անպայման կոլ են խփելու: Բացի այդ, Մինասեանը որոշ շտկումներ էր կատարել հաւաքականի խաղում: Նշուեց նաեւ, որ Ռոբերտ Արզումանեանի վնասուածքը լուրջ չէ եւ նա կը մասնակցի յաջորդ խաղին:*

*Սլովակիայի հաւաքականի գլխաւոր մարզիչ Վլադիմիր Վայսը ընկճուած ներկայացաւ մամուլի ասուլիսին:*

*«Ցանկանում եմ շնորհաւորել տանտէրերին լաւ խաղի համար: Այսօրուայ խաղը տանտէրերի ձեռքերում էր: Դուք ողջ հանդիպման ընթացքում տիրում էիք նախաձեռնութեանը եւ արժանիօրէն յաղթեցիք: Դուք կարող էք լաւ արդիւնքների հասնել:*

*Այն ինչ ձեռք բերեցիք Ռուսաստանում՝ կորցրինք Հայաստանում: Բայց կրկնում եմ, Հայաստանը յաղթեց արժանիօրէն:*

*2-րդ խաղակէսում մենք յաճախակի էինք սխալւում: 13 համարը (Էդգար Մանուչարեանը-խմբ) նման էր Հաջիին: Նա շատ խնդիրներ ստեղծեց մեզ համար:*

*Իհարկէ, Վիտեկը չէր խաղում, բայց նման դէպքեր եղել էին: Կան նաեւ խաղացողներ, որոնք կարող ենք փոխարինել: Խաղից առաջ ասել էի, որ դուք ունենք լաւ խաղացողներ՝18, 14, 13 համարները, սակայն այսօր ողջ թիմը լաւ խաղաց:*

*Մրցավարութիւնը բնական էր: Մենք ինքներս ենք մեղաւոր»,- ասաց Վլադիմիր Վայսը:*


**ՔԱՋ ՆԱԶԱՐ**

**ՌԻԴԻԴ ԵԹԵՐ ՇՕ**

**Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:30**

**Կլէնտէյլի 380-րդ կայանից**


## ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՆԴՈՐՐԱ՝ 4:0



*Ֆուտպոլի Եւրոպայի 2012 թուականի առաջնութեան ընտրական մրցաշարում Հայաստանի հաւաքականը տարաւ երկրորդ անընդմէջ եւ առաջին խոշոր հաշուով յաղթանակը, Երեւանի Վազգէն Սարգսեանի անուան Հանրապետական մարզադաշտում Երեքշաբթի օրը 4:0 հաշուով առաւելութեան հասնելով Անդորրայի խումբի նկատմամբ:*

*Կոլերը խփեցին Գէորգ Ղազարեանը՝ 4-րդ րոպէին, Հենրիխ Մխիթարեանը՝ 16-րդ րոպէին, Եուրա Մովսիսեանը՝ 33-րդ րոպէին, Մարկոս Պիզելլին՝ 52-րդ րոպէին:*

*Գէորգ Ղազարեանի խփած գնդակը Հայաստանի ազգային հաւաքականի 100-րդ կոլն է պաշտօնական հանդիպումներում:*

*Ընտրական մրցաշարի 3-րդ փուլում Հայաստանը 3:1 հաշուով յաղթել էր Սլովակիայի ուժեղագոյն խումբին:*

*Հայաստանի խումբը ընտրական մրցաշարի 4-րդ փուլից յետոյ 7 միաւորով ժամանակաւորապէս գլխաւորեց ընտրական B խմբի մրցաշարային աղիւսակը:*

*Այդուհանդերձ, ժամեր անց Ռուսաստանի հաւաքականը 1:0 հաշուով յաղթեց Մակեդոնիային եւ 9 միաւորով զբաղեցրեց առաջին տեղը, իսկ Իռլանդան, Հայաստանը եւ Սլովակիան 7-ական միաւորով կիսում են երկրորդ, երրորդ եւ չորրորդ տեղերը: B խմբի մրցաշարային աղիւսակի այս տեսքը կը պահպանուի մինչեւ 2011 թուականի Մարտի վերջը, երբ նախատեսուած են 5-րդ փուլի հանդիպումները:*

*Ընտրական մրցաշարի յաջորդ հանդիպումը նոյնպէս Հայաստանի հաւաքականը կ՚անցկացնի Երեւանում՝ եկող տարուայ Մարտի 26-ին ընդունելով Ռուսաստանի խումբին:*


**Հրապարակի վրայ է**




**«Յուշերու Բագին» հեղինակ՝ Արմէն Ղարիպ (տպ. Պէյրութ 2009) Գինը՝ $20**

**Ստանալու համար դիմել «Մասիս» Շաբաթաթերթին 1060 N Allen Ave Pasadena, CA 91104 626-797-7680**



**Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին**

**T: (626) 797-7680 F: (626) 797-6863**
**massis2@earthlink.net**



**REQUEST FOR PROPOSALS**
**(RFP #7538)**
**INFORMATION TECHNOLOGY (IT) SOURCING**

**The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms interested in providing IT Sourcing. A copy of the RFP may be obtained beginning September 27, 2010 at www.hacla.org/ps or call (213) 252-5405 or (213) 252-1832. Proposals will be accepted until 2:00 P.M., by November 10, 2010 at 2600 Wilshire Blvd., #3100, Los Angeles, CA 90057.**

10/7, 10/14/10
CNS-1953104#
MASSIS WEEKLY

# ՄՕՐՍ ՊԱՏԳԱՄԸ

Ծ.Խմբ. Կիրակի, 10 հոկտեմբեր 2010-ին, Փասատինայի Սրբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Սրբ. Պատարագի տեղի ունեցաւ, վերջերս, քառասուն օրեր առաջ իր մահկանացուն կնքած ողբացեալ Հռիփսիմէ Գալէնտէրեանի հոգեհանգստեան հոգեպարար արարողութիւնը: Եկեղեցական ծիսակատարութեան շուտով յաջորդեց ողբացեալին հոգւոյն համար մատուցուած հոգեճաշը, որ տեղի ունեցաւ Հ.Բ.Ը.Մ. Պոյաճեան սրահին մէջ: Այդ տխուր առիթով, սրտի խօսքով ելոյթ ունեցաւ ողբացեալին դուստրը, Տիկ. Վարդուհի Գազանճեան, որ իր անմիջական, ջերմ եւ յուզախառն զգացումներով բնութագրեց իր սիրելի մօր կեանքին ուսանելի կերպարը, որ օրինակելի կը մնայ ուրախ կեանքի մը կազմաւորման ճամբուն: Պատգամներով հարուստ, այլապէս շահեկան ելոյթ մը, զոր կ'ուզենք բաժնեկցիլ մեր ընթերցողներուն հետ:

*ՎԱՐԴՈՒՀԻ ԳԱԶԱՆՃԵԱՆ*

*Սիրելի եւ յարգելի ազգակից բարեկամներ եւ հարազատներ*

*Ձեզմէ անոնք որոնք ներկայ գտնուեցան մօրս յուղարկաւորութեան արարողութեան եւ հոգեճաշին՝ իմացան անոր հոգեւոր արժանիքներուն մասին: Ես պիտի չկրկնեմ այդ բոլորը, այլ, պիտի անդրադառնամ մօրս համար այնքան արժէքաւոր ու կենսական՝ բարոյական եւ հայեցի դաստիարակութեան վրայ:*

*Այո, մայրս համալսարանական տիտղոսներ չէր ստացած, սակայն իր ունեցած նախակրթարանի՝ Քառասնից Մանկանց Վարժարանի, եւ Հ.Բ.Ը.Մ.-ի Դարուհի Յակոբեան Երկրորդական վարժարանի մէջ ձեռք ձգած Հայեցի դաստիարակութեամբ մեծցուց մեզ, իր չորս զաւակները:*

*Ձեզի բաժնուած «մօրս կտակը» խորագրով Ա. Կոռնթ. 13-րդ գլխուն վերջին համարին մէջ ամենէն կարեւորը՝ ՍԷՐ բառին վրայ դրուած է շեշտը:*

*Մայրս, մինչեւ իր մահուան անկողինը համնիլը, բնաւ չքարոզեց Սէր բառը, այլ՝ ապրեցաւ այն կեանքը, զոր կտակեց մեր բոլորին:*

*Մայրս կ'ըսէր. Սէրը պատմուճան չէ այլ՝ կեանքի բանալին է. անով կրնաս յաղթայարել կեանքի չարիքներն ու բոլոր տեսակի դժուարութիւնները:*

*Շատ լաւ կը յիշեմ, օր մը կը պատմէր, թէ ինչպէս դրամի համար ընտանիքներ իրարու հետ քէնցած էին: Միշտ կը կրկէր ան. կամ դրամն է, եւ կամ ալ նիւթն է պատճառը մարդոց քէնութեան, եւ կ'աւելցնէր. դրամը սատանայ է, «հասկցա՞ր: Երբ սէր չ'ըլլայ, սատանան կ'իշխէ»: Յաջորդ օրը տեսայ որ Նարեկս, հազիւ չորս տարեկան, պայուսակս բացած դրամները դուրս կը հանէր: Երբ յանդիմանեցի զինք, ըսաւ. «մամա, սատանաները դուրս կը հանեմ պայուսակէդ»:*

*Մայրս սիրոյ օրինակներով ու օրհնութիւններով ողողած էր ոչ միայն իր չորս զաւակները, այլ իր փեսաները, թոռներն ու ծոռերը, հաւասարապէս:*

*Մայրս խտրականութիւն չէր դնէր իր թոռնիկներուն միջեւ: Յաճախ կատակելով կ'ըսէինք մօրս. «դուն Սարոյին, աւելի կը սիրես». ան անմիջապէս հետեւեալ օրինակը կու տար: «Տասը մատներէդ որեւէ մէկը եթէ վիրաւորուի՝ սիրտդ կը ցաւի». ու անմիջապէս կ'աւելցնէր. «բայց մի մոռնաք, որ ես շատ աշխատանք ունիմ անոր վրայ եւ ես մեծցուցած եմ զայն». Եւ ան դարձեալ կու տար տասը մատներուն օրինակը:*

*Այո, մայրս հաւասարապէս կը սիրէր բոլորը, ինչպէս կը վկայեն իր հարազատները:*

*Մօրս քառասունքը կը զուգադիպի իր ամենէն շատ սիրած Թարգմանչաց տօնի օրուան, Սահակ Պարթեւ Հայրապետի ու Մեսրոպ Մաշտոցի լուսատու ջահեր ՝ Հայ գրերու գիւտի ու մշակոյթի օրուան:*

*Հայ գիրի, մշակոյթի, եկեղեցիի, ազգի եւ Հայրենիքի հանդէպ Մայրս իր ունեցած սէրը ոչ միայն փոխանցեց իր չորս զաւակներուն, այլ նաեւ՝ իր տասներկու թոռնիկներուն: Ան անհամբեր կը սպասէր իր թոռան Վիգէնին հայերէն լեզուով վարած բժշկական հաղորդումներուն, ամէն Երկուշաբթի երեկոյ: Անհուն Հպարտութեամբ կը լեցուէր իր սիրտը, տեսնելով անոր ընդհանրապէս հայ հասարակութեան եւ մեր մայր հայրենիքին մատուցած բժշկագիտական ծառայութիւնները:*

*Քանի մը օրեր առաջ, երբ մօրս թուղթերը աչքէ կ'անցնէի, գտայ շատ յատկանշական պահարան մը, զոր այնքան խնամքով պահած էր: Պահարանին վրայ հայերէն տառերով գրուած էր «Նէնէ» բառը:*

*Գտայ նաեւ երեք այլ քարտեր, երեքն ալ իր թոռներուն կողմէ էին. մէկը անստորագիր էր, իսկ միւսները՝ ստորագրուած էին. մէկը գրուած էր իր անունը կրող Հռիփսիմէ Թոռնուհիին կողմէ, իսկ միւսը՝ Շահան Թոռան կողմէ: Այս քարտերուն վրայ թուական չկար:*

*Շատ լաւ կը յիշեմ այդ «մայրերու օրը», երբ մայրս կարդաց «Նէնէ» անունը կրող քարտը եւ ուրախութենէն՝ Շահանին հարիւր տոլար նուիրեց:*

*Անմիջապէս ետք, մայրս հարցուց անոր. «գիտե՞ս ինչու տուի այս հարիւրը»: Շահանը պատասխանեց. «այո, որովհետեւ հայերէն լեզուով գրած էի քարտս, եւ դուն անգլերէն չես հասկնար»:*

*Իր փոքրիկ ծոռը, Հայկ-Արան անգամ իրեն հետ հայերէն կը խօսէր, եւ հակառակ մեր պնդումներուն՝ ան մեզի հետ կը խօսէր անգլերէն:*

*Շատ կը սիրէր կարդալ հայկական բոլոր թերթերը, անխտի՛ր, եւ հայ բանաստեղծներու գործերէն՝ Վահան Թէքէեանի «Հայու Հոգին», «Եկեղեցին Հայկական» եւ «Խորհուրդ Վարդանանց», բանաստեղծութիւնները, Պարոյր Սեւակի «Քիչ ենք Բայց Հայ ենք»ը, ինչպէս նաեւ իր նախասիրած բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեանի «Խօսք Իմ Որդուն»ը, «Ու տես որդիս, ուր էլ լինես, այս լուսնի տակ ուր էլ գնաս, թէ մօրդ անգամ մտքիցդ հանես, քո մայր լեզուն չմոռանաս»: Ան անգիր գիտէր այս բոլոր բանաստեղծութիւնները:*

*Վերջապէս, մայրս ունէր անհուն սէր հանդէպ Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցւոյն: Իր այս սիրոյ մէջ անգամ, մայրս խտրութիւն չէր դնէր. բոլոր եկեղեցիները իր հոգիին տունն էին, որ թեմին ալ պատկանէին անոնք: Ան բոլորին կը ծառայէր ու կ'այցելէր անխտիր, հաւասարապէս:*

*Իր կեանքի վերջին օրերուն՝ ըսաւ մայրս. «ես հարուստ եմ. աննման ամուսին մը, սիրող զաւակներ, հարսեր, փեսաներ, թոռներ ու ծոռեր ունենալուս համար, եւ ամենէն աւելին՝ ինծի այս բոլորը շնորհող Փրկչիս Սէրը: Ահաւասիկ, այս հարստութիւնը ու ժառանգը կը թողում բոլորիդ», եւ աւելցուց ըսելով. «հազար փառք. աշխարհը պտտեցայ, նամանաւանդ հօրս համար երազ մնացած Հայաստանը, անկախ Հայաստանը: Այցելեցի Ղարաբաղը: Տեսայ Էջմիածինը: Իջայ Խոր Վիրապ»: Ապա շուտով, յուզումնալից ձայնով սկսաւ երգել. «Փառք քեզի ով տէր կրկին ու կրկին որ այս բոլորը շնորհեցիր ինծի: Ալ հիմա կ'ուզեմ երթալ իմ Իսկական Տունս»:*

*Միշտ ժպտերես, գոհունակ, նաեւ՝ սակաւախօս մայրս՝ սիրով, համեստութեամբ, գոհողութեամբ, ծառայասիրութեամբ, ներողամտութեամբ, համբերութեամբ, լաւատեսութեամբ, Համերաշխ եւ արդար ոգիով հարուստ կեանք մը փոխանցեց մեր բոլորին:*

*Հիւանդանոցին մէջ հարց տուի մօրս, - մայրս ի՞նչ պատգամ կ'ուզես տալ ինծի: Գիտեմ որ անսահման օրհնութիւններդ բաշխեցիր մեզ բոլորիս, սակայն քու կտակէդ դուրս, ոսկի պատգամ մը ունի՞ս ինծի տալիք»:*

*Մայրս պատասխանեց.*

*-Ծառայասիրութեան մանեակը կու տամ քեզի աղջիկս: Ծառայէ քու եկեղեցիիդ, ազգիդ, մշակոյթիդ: Հասիր բոլոր կարօտեալներուն: Ծառայէ անխտիր լուռ: Կարեւորը՝ առանց որեւէ ակնկալութեան, այն ատեն է, որ դուն աղէկ բաժինը ընտրած կ'ըլլաս:*



## ՎՇՏԱԿՑՈՒԹԻՒՆ

*Հալէպի Կիլիկեան Ճեմարանի նախկին տնօրէն՝ վաստակաշատ կրթական մշակ, երկարամեայ հասարակական գործիչ եւ Սուրիոյ Հանրապետութեան Խորհրդարանի նախկին անդամ **ՌՈՒԲԷՆ ՏԻՐԱՐԵԱՆ**ի մահուան տխուր առիթով Կիլիկիան Բարեգործական Միութեան վարչութիւնն ու անդամները իրենց խորազգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի այրիին եւ համայն ընտանեկան պարագաներուն:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

***ԱՏՐԻՆԷ ՄԱԹՈՍԵԱՆ**ի մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնը իր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ամուսինին, զաւակներուն, քոյրերուն, եղբօր եւ համայն ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Արժ. Տ. Տաթեւ Քհնյ. եւ երէցկին Արաքսի Թաթուլեանին:*

********

***ԱՏՐԻՆԷ ՄԱԹՈՍԵԱՆ**ի մահուան տխուր առիթով Փասատինայի Հ.Մ.Մ.ի Վարչութիւնն ու Տիկնանց Օժանդակ Մարմնի անդամուհիները, իրենց խորազգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ամուսնոյն, զաւակներուն եւ համայն ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տիկնանց Օժանդակ Մարմնի անդամուհիներ՝ Մայրանուշ Սողոմոնեանին եւ Անահիտ Խպոյեանին:*

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

***ԱՏՐԻՆԷ ՄԱԹՈՍԵԱՆ**ի մահուան տխուր առիթով հետեւեալները իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ամուսնոյն եւ համայն ընտանեկան պարագաներուն:*

*Առ այդ փոխան ծաղկեպսակի «Մասիս»ի ֆոնտին կը կատարեն ստորեւ նշուած նուիրատուութիւնները.*

| | |
|---|---|
| *Տէր եւ Տիկ. Յակոբ Խպոյեան* | *$100* |
| *Տէր եւ Տիկ. Յարութ Մաթոսեան* | *$100* |
| *Տօքթ. եւ Տիկ. Գուրգէն Մաթոսեան* | *$100* |
| *Տէր եւ Տիկ. Համօ Մաթոսեան* | *$100* |

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

***ՀՌԻՓՍԻՄԷ ԳԱԼԷՆՏԷՐԵԱՆԻ** մահուան տխուր առիթով, հանգուցեալին ամուսինը՝ Արշակ Աւագ Սրկ. Գալէնտէրեան, զաւակները, թոռներն ու հարազատները իրենց զգացուած շնորհակալութիւնները կը յայտնեն Առաջնորդ Սրբազաններուն, Գերշն. Տէր Յովնան Արք. Տէրտէրեանին եւ Գերշն. Տէր Մուշեղ Արք. Մարտիրոսեանին, Հայր Պարթեւ Ծայրագոյն Վարդապետ Կիւլիւմեանին, Արժանապատիւ Տէր Արշակ Աւագ քհնյ. Խաչատուրեանին, Տէր Զաւէն Աւագ քհնյ. Արզումանեանին, Տէր Յովսէփ Ա. քհնյ. Յակոբեանին, Տէր Արտակ քհնյ. Տէմիրճեանին, Տէր Սարգիս քհնյ. Փեթոյեանին, Տէր Նարեկ քհնյ. Մատարեանին՝ իրենց մատուցած հոգեպարար պատգամներուն համար: Նոյնպէս, շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, այցելութեամբ, գրութեամբ, Ե-մակներով, հեռաձայններով, հոգեճաշերով, ծաղկեպսակներով, եւ կամ փոխան ծաղկեպսակի՝ Հայաստանեայց Առաքելական Սրբ. Եկեղեցւոյ Եղբայրակցութեան եւ «Մասիս» Շաբաթաթերթին առաքած նուիրատուութիւններով մասնակից եղան իրենց սուգին:*

*Ընտանիքը, նաեւ, շնորհակալութիւն կը յայտնէ Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստա նեայց Առաքելական եկեղեցւոյ հովիւ Տէր Սարգիս քհնյ. Փեթոյանին եւ Հայր Գեղամ Ծայրագոյն Վարդապետ Զաքարեանին, ինչպէս նաեւ ծխական Խորհուրդի անդամներուն եւ բոլոր անոնց, որոնք ներկայ գտնուեցան հանգուցեալ Հռիփսիմէ Գալէնտէրեանի հոգեհանգստեան արարողութեան, հոգեճաշին, եւ կամ հեռաձայններով ու նուիրատուութեամբ յարգեցին մեր ողբացեալ հարազատին յիշատակը:*


ARMENIA'S CHILDREN CHRISTMAS GIFT FUND
SINCE 1999
"Քաչ Նազար" հանդէսը եւ հեռուստաժամը
Ներկայացնում է
11-րդ ամեակի ԹԵԼԵԹՈՆ
Ի ՆՊԱՍՏ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՒ ՀԱՇՄԱՆԴԱՄ
ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՑ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ
ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
(հիմնուած 1999թ.)
Կիրակի,հոկտեմբեր 31, 2010
երեկոեան ժամ 4-12-ը
Sponsored by
"KACH NAZAR" Magazine & TV Show
11 ANNIVERSARY
NATIONWIDE TELETHON
ON SUNDAY
OCTOBER 31, 2010
AMGA
CHANNEL 380
Glendale, CA
From 4:00 pm
12midnight
ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND, INC.
FOR DISABLED CHILDREN AND FOR THE RESTORATION OF CHILDREN'S HOMES
ՕԳՆԵՆՔ ՄԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՆՐԱՆՑ
ԱՊԱԳԱՆ ԿԵՐՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ
HELP OUR CHILDREN TO BUILD THEIR FUTURE . . .
www.forourkids99.com
BEFORE
Kharpet
2008
AFTER
Everyday we build the dreams and future of our children with your generous donations. In their prayers they remember you and give their blessings upon you.
Ձեր օգնութեամբ մենք ամէն օր կառուցում ենք, հանգստութիւն և ուրախութիւն պարգեւում հայրենի կարօտեալ երեխաներին: Նրանք իրենց աղօթքներում միշտ յիշում և օրհնում են ձեզ...
Spitak #1
School 2009
P.o. Box 250038 • Glendale, CA 91225 • Tel: 818-246-0125 • 818-239-6880 or 818-606-2070
E-mail: Forourkids99@gmail.com Non-profit Organization A Tax-exempt 501 (c)3 Charity
Spitak #1
School 2010